ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Է. — ՇՐՋԱՆ Ը. **1875** ՏԱՐԻ Ը. — ՅՈՒԼԻՍ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏ ամսագրոյս անցեալ Է։ըդ թուոյ (Մայիսի) Սուրհանդակ Բիւզանդեան բաժնին մէջ յերես 199՝ հրատարակուեցաւ Կ. Պօլսոյ Յունաց Ս. Պատրիարքի մի բանախօսութեան պատճէնը, զոր նորին սրբութիւն բարեպատեհ աւիթ ունեցած եւ արտասանած էր Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքական Աւագ Եկեղեցւոյ մէջ, եւ ուշադիր ընթերցողք անշուշտ նկատեցին յիշեալ ատենախօսութեան բովանդակած բուն իմաստները եւ մաղթանօք արտաբերած եղջը։

Ատենախօսութիւնը նախապատրաստուած կերեւի, իսկ արտայայտուած միտքը նոր չէ՝ թէ եւ ջանք եղած է՝ զի իբր թէ այլ իմն նորարծարծ սէր ի սրտէ եւ անկեղծ ոգւոյ զգացմունք մըշակած երեւի եւ քարոզէ, եւ իւր նախնեաց նպատակին արձագանք լինելն՝ ինքն եւս խոստովանած է ասելով՝ «հարքն մեր խիստ փափաքեցան՝ բայց չարժանացան», հետեւաբար՝ խնդիրն շատ պարզ կշօշափուի՝ թէ ինչ է նորա մաղթանօք ըղձացած բուն նպատակը։

Թէպէտ Հայք ի հնումն եւ մինչեւ ցարդ՝ քանի որ արտաքին հզօր՝ եւ ըստ բերմանց ժամանակաց՝ տիրապետող իշխանութեանց ճնշումներէն ազատ մնացած են, երբէք ոչ մեծ նշանակութիւն եւ ոչ արժէք տուած են՝ եւ ոչ այսուհետեւ եւս կըտան, զի ինչպէս Հռովմէական՝ նոյնպէս Յունական եկեղեցիներէն՝ Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնի՝ հաւատոյ եւ դաւանութեանց նկատմամբ յաւէտ [illegible] ակնկալեն՝ լսեն եւ այնպէս յարգեն եւ պաշտեն իւրեանց Քրիստ. կրօնը, սակայն միշտ քննած են՝ կըքննեն եւ պէտք է որ քննեն իմանալոյ համար թէ, երբ՝ զոր օրինակ՝ Յոյնք, մերթ մասնաւոր եղանակօք եւ երբեմն հրապարակաւ կճանաչեն եւ կխոստովանին՝ որ Հայոց Եկեղեցին եւս [illegible], [illegible] եւ [illegible] պաշտօղ ընդհանրական՝ Մի՝ Սուրբ եւ Առաքելական Եկե-

ղեցւոյ անդամ է՛ կամ նորա մի մասը կկազմէ, ընոյն կդաւանի եւ կպաշտէ, ուրեմն այլ եւս ի՞նչ կնճիռ կայ եւ ի՞նչ են այն խնդիրներ՝ զորս ժամանակաց բերումն արտադրեց եւ երկու քոյր եկեղեցիքը միմեանց դէմ զինեց անհնարին ատելութեամբք եւ հակակրութեամբք։

Յոյնք կխոստովանին՝ որ Հայաստանեայց Եկեղեցին ի Նախնումն՝ Յունական եկեղեցւոյ հետ եւս ի կրօնականս միաբան՝ համամիտ եւ սերտ կապակցութիւն ունէր, հետեւաբար յայնժամ ուղղափառ եւ հաւատարիմ աւանդապահ կճանաչուէր, իսկ արդ ի՞նչ պատճառ կայ՝ որ նախնականին հակառակը կնկատուի, ուստի կփութամ եւ միշտ մի եւ նոյն արձագանքը կտամ մաղթանօք իղձ յայտնելով՝ հոմոուսիոն եւ հոմիուսիոն միակելոյ եւ պատրաստելոյ համար։

Բայց դեռ նպատակը չքննած՝ նախ եւ յառաջ տեսնեմք թէ՝ ի՞նչ կնշանակէ զՀայկական Եկեղեցին ի Նախնումն եւ ի Ներկայումս տարբեր տարբեր վիճակի ենթարկեալ տեսանելոյ ջանալ, եւ ի հնումն ընդ Յունականին մի եւ համամիտ՝ իսկ ի ներկայումս ոչ — մի եւ ան-համամիտ ցուցանել։

Խնդիրն հաւատոյ էական մասանց վերայ պիտի լինի։ Ըստ որում՝ ինչպէս որ առաքելական դարում ամեն եկեղեցեաց մէջ կային՝ որք առաքելական գործոց եւ գրութեանց մէջ բացորոշ եւ շատ պարզ կաւանդուին, նոյնպէս Հայոց եւ Յունաց երկու քոյր Եկեղեցեաց մէջ եւս շարունակաբար ըստ ծիսից եւ արարողութեանց բաւական եւ մեծ տարբերութիւնք կային եւ ցարդ կան՝ զորս ոչ ոք համարձակի եւ ի՞նչ հարկ կայ ժխտել։

Հաւատոյ էական մասունքը ի Քրիստոսէ եւ յԱռաքելոցն աւանդուած էին եւ կդաւանէր Քրիստ. Եկեղեցին առաջին դարերում ամենայն պարզութեամբ։ Եկեղեցւոյ եւ ոչ մի մասն իրաւունք ունէր եւ պիտի ունենար հաւատոյ էական մասանց մէջ նոր խնդիրներ յարուցանել եւ յուզել. եւ ցորչափ առաքելական աւանդութեանց եւ վարդապետութեանց ջերմեռանդ հաւատարմութիւն եւ պաշտօն կնուիրէր ընդհանուր Եկեղեցին, չնայելով որ զանազան եւ տարբեր ազգերէն կբաղկանար եւ նոցա մէջ քաղաքական տարբեր պայմաններ եւ շահեր եւս կային, բայց եւ այնպէս՝ նոքօք կազմեալ Ընդհ. Եկեղեցւոյ մէջ միութիւնն եւ համամտութիւնն եւս կատարեալ էր եւ կթագաւորէր, ընդ որս էր նա եւ Հայոց եւ Յունաց երկու քոյր եկեղեցեաց մէջ՝ որ եւ առ առաւելն՝ ցհինգերորդ դար տեւեց։

Իսկ հինգերորդ դարէն սկսեալ՝ երբ հաւատոյ էական մասանց մէջ նոր եւ օտար խնդիրներ յուզուեցան եւ յաճախեցին, միութիւնը եւ համամտութիւնը հետզհետէ խանգարեցաւ եւ ծանրածանր կերպարաններ եւ ընդհանրապէս խռովութիւններ մտան Եկեղեցւոյ մէջ։

Բայց սակայն ո՞վ էր նոր նոր խնդիրներ յուզողն եւ կրօնական խնդրայ ներքեւ քաղաքական նպատակներ պատրաստողն։

Հայո՞ց Եկեղեցին էր. — Ո՛չ եւ երբէք։

Չէ՞ որ գլխաւորապէս Յոյնք կամ Յունաց եկեղեցին էր, որով Եկեղեցւոյ միութեան եւ համամտութեան մէջ նոր եւ բծախնդիր՝ չասեմ զրախնդիր՝ կամ թէ վիճաբանական քննութիւնք եւ տեսութիւններ անելով եւ դայնս հաւատոյ էական մասանց կարգը դասել նկրտելով՝ սնոտի վէճեր ծագեցան, միութիւնը քակտեցաւ եւ համամտութիւնը անհամամտութեան փոխարկւեցաւ:

Ուրեմն Յունաց Եկեղեցին նոր եւ աւելորդ խնդիրներ յուզելով՝ ինքն երկպառակութեան եւ յուզմանց նախապատճառ եղաւ եւ տեղի տուաւ, հետեւաբար ինքնին յինչ ինչ իրս դաւանութեանց եւ վարդապետութեանց եւս. հեռացաւ Եկեղեցւոյ նախնական պարզ վիճակէն, իսկ Հայոց Եկեղեցին աւելի քան զնա եւ զայլսն՝ հաստատուն մնաց իւր նախնական վիճակին մէջ՝ ինչպէս ցարդ եւս ամենաջերմեռանդ հաւատարմութեամբ եւ նախանձախնդիր աւանդապահութեամբ կյարատեւէ եւ Աստուծով յաւիտեանս պիտի յարատեւէ ի նմին:

— Ուստի՝ եթէ բարեմաղթել հարկ կը լինի՝ զայն պէտք չէ՞ վերուղղել առ Աստուած իւրեանց (յունաց) Եկեղեցւոյ նկատմամբ՝ նախնական պարզ վիճակին վերադառնալոյ համար: —

Սակայն Յունաց Պատրիարքին արտայայտած միտքը եւ իղձը այս կէտի վերայ չէ եւ չկրնար լինել, վասն որոյ մտանեմք եւ քննեմք բուն նպատակը:

Յունաց Ս. Պատրիարքին հետեւեալ խօսքը. հակասական չէ՞ եթէ արդարեւ Յունականէն թարգմանուածը ճշդութեամբ եղած է, երբ կասէ, թէ՝ «Հայկական Եկեղեցին կկապակցի մերայնոյն հետ ոչ միայն նախնի պատմութեամբ (°) եւ հոգեւոր յարաբերութեամբ, այլ նաեւ ժամանակային դիպուածոց եւ պատահարաց նոյնութեամբն (°) », եւ շարունակելով հետեւեալ աւելի պարզ խօսուածքը՝ բուն նպատակը կմատնէ՝ երբ կասէ, զի՝ «փոխա-
«դարձաբար նուիրական եւ անհրա-
«ժեշտ պարտականութիւն ունիմք եր-
«կաքանչիւրս՝ երկու քոյր եկեղեցեաց
«բարեկամական յարաբերութիւննե-
«րը մշակելու, եւ ամենայն մտերմու-
«թեամբ՝ նոցա ցանկալի եւ ըղձալի հա-
«մաձայնութիւնն ու միութիւնը պատրաս-
«տելու, վասն զի՝ թէ եւ ստոյգ է թէ՝
«Ոչ է մեզ գիտել զժամս և զժամանակս՝
«զոր Հայր եդ յիւրում իշխանութեան՝
«սակայն ոչ սակաւ անդիմաբանելի է
«մեր գործակցութեանց անհրաժեշտ
«ըլլալն ԸՆԴ ՀՈՒՊ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ
«ԳՈՐԾԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ՈՐՈՒՄ ՀԱՐՔՆ
«ՄԵՐ ԽԻՍՏ ՓԱՓԱՔԵՑԱՆ՝ ԲԱՅՑ
«ՉԱՐԺԱՆԱՑԱՆ»: Եւ դարձեալ
թէ՝ «Յարատեւենք ուրեմն, սիրելիք՝
«յարատեւենք երկնաւորին բանալու մեր
«մէջէն ծագեալ խոչընդոտները և փրկարար
«եկեղեցական միութեան ճանապարհն հար-
«թելու»:

Մեր Ազգային եւ Եկեղեցական պատմութեանց տեղեակ եւ հմուտ եղողները կիմանան անշուշտ եւ կմտաբերեն՝ թէ այն հարքն՝ — որոց կակնարկէ Յունաց Ս. Պատրիարքն՝ ինչպէս որ աւելի եւս իւրեանց հարց կամ նախնեաց

ուղղուած պիտի լինի իւր միտքն — ի՞նչ բանի փափաքած են՝ կամ նոցա փափաքներն ի՞նչ էին եւ որքա՜ն կրճգնէին եւ բազմակերպ միջոցներ կհնարէին ակնարկեալ նպատակին հասանելոյ համար, զորս կանխաւ ուրիշ յօդուածոց մէջ յիշելոյ եւ բացատրելոյ, քանիցս բարեպատեհ առիթ ունեցած լինելով՝ աստ մանրամասնել աւելորդ կը համարիմք, հետեւաբար հեշտ կիմացուի ԳՈՐԾԻՆ ՄԻՈՒԹԵԱՆին նշանակութիւնը եւ արժէքը: — Խաբուսի՛կ յոյս:

Իսկ արդ, դրէ՛թէ մի եւ նոյն դրութեան եւ վիճակի մէջ կգտնուէին Յոյներն եւս՝ ինչ դրութեան եւ վիճակի մէջ որ կգտնուիմք մեք Հայերս, հետեւաբար համանման ճակատագրի վճիռը կը կրեն, զոր նա եւ Նորին Սրբութիւն քաջ գիտնալով կխոստովանի, որ եւ հետեւեալ խօսքին մէջ պարզապէս կշօշափուի՝ երբ «Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ խան արքային մերոյ (Թուրքիոյ) հովանաւորութեամբ ներքեւ» զարգանալոյ համար եղբայրական սիրոյ պէտքը կը յիշէ: Ուրեմն ի՞նչ նշանակութիւն ունի ներկայ վիճակի մէջ անգամ Յունաց Ս. Պատրիարքին գործածած լեզուն եւ յայտնած միտքը, որ եթէ նոցա հզօր գիրք ունեցած ժամանակ անգամ՝ Յոյն [illegible] էր, այժմ եւ այն այսպիսի ժամանակի՝ եւ ժողովրդեան հետզհետէ աւելի եւ ընդհանրապէս զարգացած միջոցում արձագանք պիտի գտանէ եւ կարեւորութիւն ստանայ:

Այո՛ մեծ կարօտութիւն կայ եւ պէտք է երկու քոյր Եկեղեցիք եւ երկու Ազգեր միանան՝ ո՛չ թէ ի կրօնականս եւ ի հաւատս, այլ յաւէտ եւ միշտ յեղբայրական եւ ընկերասիրական եռանդ եւ ի սէր միութեան, որ եւ քանի՜ առաւել գեղեցիկ եւ բազմարդիւն հետեւանք կունենայ երկու կողմանց ազգային գործոց մէջ՝ եթէ արդարեւ անկեղծ ոգւով եւ պարզ Քրիստոնէական եղբայրսիրութեամբ լինի: Ապա թէ ոչ, այն միութեան նպատակը ուրիշ կերպ իմանալոյ ի՞նչ հարկ եւ կարօտութիւն կայ, եւ զրախօսութենէ աւելի ի՞նչ նշանակութիւն կըստանայ:

Ի զո՜ւր են եւ գրեթէ միշտ զառանցանք եւ երազայուզութի՜ւն է այնպիսի միտք տածել՝ եւ արտասանելն անգամ ոչ սակաւ նախատինք կարդինաւորէ արտասանողի համար, մանաւանդ արդէն փորձով շօշափելով՝ Յոյն [illegible] եւս իւրեանց ազգային սահմանած պիտի լինին իւրեանց անտեղի եւ զրաջան վաստակոց ապարդիւնաւորութիւնքը եւ դառն հետեւանքները, եւ ինչ հարկ ի ներկայիս եւս սոյնպիսի մոքեր կրել ծամծմել եւ հրապարակել. իսկ եթէ նըպատակն լոկ եղբայրսիրական է, ուրեմն ի՞նչ հարկ կայ եւ այն ի՞նչ խոչնդոտներ են՝ զորս բառնալոյ ջանամք, եւ այն պարզ նպատակին առջեւ ի՞նչ արգելք կրնայ պատահիլ կամ կարէ ելնել՝ եթէ կրօնական գաղտնի եւ տարբեր նպատակ չկայ՝ կամ թէ [illegible] պարզապէս երկու եկեղեցիքը ի մի ձուլելոյ ջանից եւ արդեանց չլինի յանգելի:

Քանի՛ որ կընդունիմք՝ զի՛ մի է Քրիստոնէական ընդհանուր՝ մի՛ առաքելական սուրբ Եկեղեցւոյ Առաջնորդ եւ

եւ հիմնադիր՝ եւ այն Տէր Յիսուս Քրիստոսն է, եւ ցորչափ կհաւատամք՝ որ մի եւ նոյն Եկեղեցին Քրիստոսի կդաւանի եւ կպաշտէ մի եւ նոյն Տէրը, մի եւ նոյն Հաւատը, եւ մի եւ նոյն Մկրտութիւնը, ուրեմն ի մի Քրիստոս կեդրոնացեալ Եկեղեցւոյն համար հարկ չկայ ընդհանուր եկեղեցական միութեան ճանապարհ հարթելոյ, որովհետեւ դաւանածն մի ուրիշ կամ մի տարբեր տէր, ուրիշ հաւատ եւ ուրիշ մկրտութիւն չէ, հետեւաբար եւ ոչ Քրիստ. Եկեղեցւոյ ամբողջութեան մէջ ըստ հաւատոյ էական եւ նախնաւանդ մասանց բաժանումն կայ։

Ապա թէ ոչ՝ կնշանակէ որ՝ ժողովելը եւ ընդհանուր համաձայնութեան եւ միութեան մի այլ գաղտնի նպատակ կայ, եւ սորա համար պիտի լինի Յունական Ս. Պատրիարքի ակնարկածն եւ ընդ հուպ յաջողութեան բաղձացածն։ Եւ եթէ այսպիսի նպատակ ունի, եւ սորա համար սէր եւ միութիւն կխնդրէ եւ կբարեմաղթէ, սրտահատանօք կկարեկցիմք նորա վերայ եւ կափսոսամք յանձն առած ձանձրանաց, որով իւր անձը ոչ միայն անհանգիստ կանէ, այլ եւ սիրտը կմաշէ. իսկ եթէ չափազանց եռանդ ունի եւ վառուած է տարապայման ինչ միութեան անձկանօք, ընդէ՞ր Պուլղարաց ազգին չդիմեր եւ նոցա մէջ փորձ չփորձեր եւ չքարոզեր այս եկեղեցեաց միութիւնը՝ քանի՛ որ սոքա դեռ նոր բաժանեցան ի Յունաց, եւ այն սակաւամեայ բաժանումը ոչ միայն բարոյապէս՝ այլ նաեւ նիւթականապէս մեծ վնաս եւ հարուած տուաւ Յունաց, ուրեմն իրօք երբեմն իւր Եկեղեցւոյ եւ իշխանութեան հպատակ եւ ժողովուրդ եղող Պուլղարը*) չկարողանալով շահել եւ յակամայից բռնադատուելով եւ թողլով բաժանուիլ՝ այժմ Յունաց Ս. Պատրիարքն ի՞նչ նպատակ ունի՝ ի՞նչ առիթ զգաց՝ կամ յումմէ՞ թելադրուեցաւ՝ որ միութեան համար՝ Առաքելական յատուկ Եկեղեցւո ինքնուրոյնութիւն, անկախ գոյութիւն եւ կազմութիւն եւլն. ունեցող Հայոց դիմելոյ նեղութիւնը կը քաշէ։

Բայց եթէ այսպիսի սնոտի յոյսեր մի կողմ դնելով, Յոյնք եւ յունաց Ս. Պատրիարքն աշխատին եւ ջանան Հայոց հետ բաղձացեալ համաձայնութիւնը եւ միութիւնը՝ ինչպէս որ արժան եւ պէտք է՝ արտաքին ընկերական եւ գործնական յարաբերութեանց մէջ փնտռել եւ զայնս մշակելոյ զուն գործել, սորա համար ոչ մի ժամանակ՝ ոչ խոչնդոտ եւ ոչ կնճիռ կայ՝ եւ այն մանաւանդ Հայոց կողմանէ, եւ Յոյնք եւ Հայք յաւէտ պարտաւոր եւ կարօտ են արտաքին ընկերական յարաբերութեանց մէջ միութեան եւ համամրտութեան՝ Քրիստոնէական եղբայրսիրութեան իրական եւ պարզ նշանակութեամբ, եւ այսպէս երկուց ազգաց ներքին գործերը յաւէտ ի բարին եւ յօգտակարն առաջնորդել եւ արդիւնաւորել։ Եւ պէտք է քաջ գիտնալ եւ կըշռել՝ որ այսպիսի միութիւն ամեն ժամանակ կարեւոր եւ անհրաժեշտ է։ **)

(*) Ինչպէս նա և Պուլղարաց նման և նախ քան զՊուլղարս արթնցող և բաժանուող ուրիշ ազգերը . . . :

(**) Եւ արդարև ուրիշ տեսակ միութեան ի՞նչ հարկ և կարևորութիւն կայ, իսկ օգուտն ի՞նչ պիտի լինի, բայց եթէ ոչ ինչ երևելի։

Ի վերայ այսր ամենայնի՝ քաջ գիտեմք՝ որ Յունաց նկատմամբ եւս այս ամենը միանգամայն ի զուր է եւ ձայն բարբառոյ յանապատի, ըստ որում այսպիսի խօսքեր շատ ժամանակներէ ի վեր է՝ որ եւ շատ անգամ փոխադարձաբար կփոխանակուին, եւ շատ չանցած՝ ինչպէս որ այս միջոցներում եւս քանիցս եղաւ, արդեամբք հակառակը կգործեն եւ երբէք չեն դադարիր, սակայն յուսամք եւ բաղձամք՝ որ գուցէ Յունաց երիտասարդ սերունդն մշակէ վերեւ յայտնած անկեղծ՝ արդիւնաբեր եւ կարեւոր նպատակը եւ կտակէ ապագայ սերնդեան գործնականապէս ճանաչել եւ յարգել:

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

Յունաց վերայ այսպիսի նպատակի՝ այս ինքն արտաքին պարզ՝ սիրալիր և աշխարհավարական յարաբերութեանց նկատմամբ ևս յոյս դնելն խպառ աւելորդ է՝ մտ դնելով անցելոյն և ուսանելով երկարդարեայ փորձերէն և անցքերէն: Միանգամայն Յոյնք չկարծեն որ՝ Հայք անպատճառ նոցա ձեռնտուութեանց կարօտ են, ուստի և ներողամիտ աչօք կնային նոցա վերայ. ոչ երբէք. վասն զի Հայք վեհանձնաբար և ինքնաբերաբար՝ եթէ Յոյնք ևս կցանկա՞ն՝ կբաղձան միայն և անկեղծ եղբայրսիրական և Քրիստոնէավայել յարաբերութիւն ունենալ՝ երբէք չթոյլ տալով և չներելով կրօնական խնդրոց սահմանները մերձենալ, ևս կպահանջեն որ՝ Յունաց արտասանած և արտայայտած սէրը և տուած սիրոյ համբոյրները կեղծ ու պատիր չլինին՝ ինչպէս որ միշտ կեղծ եղած են, և նոցա համար ևս քանի որ առիթ եղած է՝ միշտ դիտողութիւններ և երկար յօդուածներ գրած և հրատարակած են՝ ինչպէս որ այս օրերս ևս եղաւ, և միշտ դատապարտած են նոցա խարդախ և կեղծապատիր ընթացքները և աշխարհի առջև նշաւակած:

Ի վերայ այսր ամենայնի՝ Յոյնք միշտ Հայոց սիրալիր խօսքերէն և ներողամիտ յարաբերութիւններէն կջանան և կերազեն մի տարօրինակ օգուտ քաղել՝ մինչև այն աստիճան՝ որ նոցա եպիսկոպոսներէն մին կյանդգնի ինքեան ներել և ասել թէ Հայք մոլորեալ են, բայց մի և նոյն ժամանակ գիտնալով Յունաց եկեղեցւոյ ուղղափառութիւնը և ողջամտութիւնը՝ միշտ սիրով և յարգանօք կվարուին, իսկ մեք (Յոյնք) գիտնալով նոցա մոլորութիւնը՝ չեմք կարող նոյնը փոխարինել ևայլն: Թող Յունական եպիսկոպոսք և նմանիքն այսպիսի և աւելի նախատական խօսքերով այրած սրտերուն մխիթարանք տան, թող այսպիսի օգւով և զգացմամբք շարունակեն իւրեանց օրհնեալ տաճարները, եկեղեցիները ևն. բայց քաջ իմանան՝ որ ամեն մարդ և ազգ՝ իւր գործով իւր ոգին և վիճակը կյայտնէ: Հայք աւելի ուրախ են միշտ և մեծ օգուտ կտեսնեն յունական տաճարներէն, բայց չկարծեն երբէք որ՝ Հայք ևս կսիրեն այնպիսի հակաքրիստոնէական և Ս. Աւետարանի ընդդէմ ընթացքները, չկարծեն երբէք՝ որ Հայք զինքեանս մոլորեալ գիտեն և զՅոյնս ուղղափառ, ուստի և ներողամիտ աչօք կնային Յունական եկեղեցւոյ վերայ: Վասն զի Հայոց առջև մի և նոյն վիճակի մէջ են ինչպէս Յունաց՝ նոյնպէս Հռովմէական եկեղեցին և այլք, և Հռովմէականն ևս մի և նոյն յարգանքը՝ սէրը և ներողամտութիւնը ի Հայոց կվայելէ, և եթէ Հռովմէականն իրաւունք ունի և կներէ ինքեան Յունական եպիսկոպոսին նման ասելոյ, ուրեմն պէտք է ընդունին Յոյնք՝ որ Յունական եկեղեցին ևս մոլորեալ և այն է՝ ինչպէս որ միշտ ասած է և կոչնդէ Հռովմէական եկեղեցին, հետևաբար Հռովմէականի այս ընթացք ինչ արժէք և նշանակութիւն որ ունի Յունաց առջև, մի և նոյն արժէք և նշանակութիւն ունի Յունացն ևս՝ ինչպէս նա և Հռովմէականացն և այլոց՝ Հայոց առջև, և Հայք մի աստիճան ևս յառաջ դնելով՝ կկարեկցին և կարգահատին թէ Յունաց և թէ Հռովմէականաց և այլոց այսպիսի հակաքրիստոնէական ոգւոյն՝ ընթացից և մոլորեանց . . . վերայ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԱԾԱՆՑ, ՈՒՐԱՑՈՂԱՑ, ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ ԵՒ ԲԱԺԱՆԵԼՈՑ ՅԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՀԱՅՈՑ.

(Շարունակութիւն):

ՅՕԴ. ԺԹ.

Սմբատ հեղինակ աղանդոյ Թոնդրակեցւոց, յ830 մինչ յ1080:

(Ամք Տեառն 830—1080): Զթոնդրակեցւոցն աղանդ ի Հայս ի ծագմանէ ցվերջն այսպէս իմն ի մերոց մատենագրաց համառօտէ հայրն Չամչեան, յորմէ և մեք ծաղկաքաղ դնեմք ըստ մեր համառօտագրութեան ի կարգի:

Յաւուրս Հայրապետութեան Յովհաննու Ովայեցւոյ և ի սպարապետութեան Սմբատայ Խոստովանողի Բագրատունւոյ՝ ի սկզբան աւերանաց աշխարհի Հայոց, Սմբատ անուն ոմն ի Ծաղկոտն գաւառէ ի գեղջէն Զարեհաւանայ, ընկալեալ նախ զաղանդ Պօղիկեանց նոր Մանիքեցւոց, ուսաւ ապա և ի Մջուսիկ մոգ Պարսկէ զպէսպէս մոլորութիւնս, եւ եկեալ ի Թոնդրակ աւան ի գաւառին Ապահունեաց՝ բնակեցաւ անդ. արտաքուստ ձեւացուցեալ զինքն քրիստոնեայ, և ի ներքուստ ամենայն իրօք հակառակեալ ամենայն օրինաց քրիստոնէութեան. աշխարհական էր, և ձեւանայր եպիսկոպոս; բայց ոչ տանէր զձեռնադրութիւն, զի ցուցցէ թէ կարգ քահանայութեան է ընդունայն ինչ. ուրանայր ըղհանդերձեալ կեանս ըստ Սադուկեցւոց՝ զնախախնամութիւնն Աստուծոյ ըստ Եպիկուրեանց, զշնորհս հոգւոյն սրբոյ և զամենայն խորհուրդս եկեղեցւոյ. ուրանայր զվարդապետութիւնն ուղիղ փառաց. ոչ զօղ առնէր մեղք կամ պատիժ, օրէնք կամ իշխանութիւն. զամենայն արհամարհէր և զամենայնիւ ծիծաղէր. զսա Գրիգոր Մագիստրոս կոչէ անիծեալ շուն, գազան ախինուուշտ, վավաշ շամբուշ, յղփեալ չարագործ և դարան կորստեան:

Ոչ ոք մնաց գրեթէ յաւանն Թոնդրակ՝ որ ոչ ընկղմեցաւ հետզհետէ յաղանդ նորա. այլ որք արտաքոյ աւանին էին, չկարացին իմանալ զչարաբուեստ աղանդն և զբանսարկաց նորին. զի ամենայն իրօք երեւէր բարեպաշտ ուրեմն դիմէ ի լեառն Խլաթայ, և անտի ի Մուփարղին քաղաք՝ յարեալ յայլազգի Մանիքեցիս՝ սատակի անդէն չարաչար մահուամբ:

(Ամք Տեառն 1004): Յետ սորա Կունծիկ ոմն անուն աբեղայ ի սահմանս Մանանղւոյ սահեալ յաղանդ Թոնդրակեցւոց, յինքն յանկուցեալ զմեծատուն և զկին մի լեզուանի, և նա զերկուս կանայս՝ զքորս, որոց և բաց ի բազմաց՝ զեղբայր եւս իւրեանց զՎրվէռ. սկսան քորքն այնոքիւ երկուք կործանել զխաչս յեկեղեցւոջ ի հայրենի ժառանգութեան իւրեանց յերկոսին գիւղս, և փակեալ զդրունս նոցին՝ զբնակիչս նոցա զթեցին ի մոլորութիւն իւրեանց. սոյնպէս առնէ Վրվէռ յիւրում կալուածի. զի շինեալ զօրով անդէն զվանս կրօնաւորաց՝ փակեաց զայն և զկրօնաւորսն հալածեալ անտի՝ եկն և բնակեցաւ առ քորս իւր. և որքան յառաջնումն բարեպաշտ էր, այնքան և ի վերջնումն զտաւ չարագործ:

Եւ զի սոքա ի ձեռն գեղջկանաց իւրեանց կործանեցին զխաչ մի պայծառ յօրինուած յաւանին Բազմաղբիւր կոչեցելոյ, որ և ուխտատեղի էր հաւա-

տացելոց ի հաստուածս լերին Պախրայ, առ այն ամբոխ մեծ արարեալ ժողովըրդոց հանդերձ եպիսկոպոսօք և երիցամբք՝ որ շուրջ զգաւառօքն էին. և դիմեալ ի տեղի նոցին՝ այրեցին զբնակարանս նոցա և զստացուածս, և զառաջնորդս նոցին կալեալ զարս վեց՝ եարկ ի ճակատս նոցա խարան՝ Սամուէլ եպիսկոպոս նոցա՝ ըստ օրինակին Սարգիս Հայրապետի, զի հալածեսցին ի մարդկանէ: Իսկ զի այսու պատճառաւ մոլորեալն Վրվէռ բողոք կալաւ առ Յոյն դատաւորն Եղիաս ի նոյն գաւառի. ի կալանաւորելն նորա զյիշեալ եպիսկոպոսն՝ վիճակաւորք եկեղեցւոյ՝ որք հասեալ էին առ նա, ի լինել իրացս՝ երիցունք, կրօնաւորք, եկեղեցականք և աշխարհականք՝ տեսեալ եթէ զինուորք դատաւորին խաբէութեամբ միայն անցուցեալ զեպիսկոպոսն յայն կոյս Եփրատայ, և զինքեանս թողլին յայս կոյս, միաբան բազմութեամբ լեալ միջամուխ ի գետն անցին անվտանգ ընդ այն, զոր սքանչելեօք իմն համարի լեալ ժամանակիցն Լաստիվերացի: Իբրև լուաւ դատաւորն զայնպիսի հրաշելիք անցանել ժողովրդեան ընդ գետն խոր, զգուշութեամբ փոյթ տարաւ տեսանել զդատ նոցա. և ի վերայ հասեալ չարութեան աղանդաւորացն՝ այն ինչ կամէր ունել զՎրվէռ, նա անկաւ առ եպիսկոպոս Յունաց Եպիսառատ՝ և խոստացաւ նմա դառնալ ի Յոյն. միայն զի ապրեցուսցէ զինքն ի ձեռաց դատաւորին. այսպէս ի ձեռաց դատաւորին զերծանի Վրվէռ. իսկ որք միանգամ յընկերաց նորա աճան առ դատաւորն՝ գանիւք և հարուածովք տանջեցան և հալածեցան ի սահմանաց անտի և աւերեցան բնակութիւնք նոցա. և Վրվէռ ոչ շատացեալ ի կեանս՝ ջեռեալ յախտ ցաւագին, և պէտք կարեաց որովայնին ընդ բերանն ելեալ՝ գազութեամբ տանջեալ սատակէր:

(Ամք Տեառն 1050): Յաւուրս իշխանութեան Գրիգոր Մագիստրոսի ի Միջագէտս երկու քահանայք ի Թոնդրակեցւոց լուսաւորեալ յԱստուածային շնորհաց և դիմեալ առ Մագիստրոսն՝ պատմեցին զչար գործս աղանդոյ իւրեանց՝ և մկրտեցան յանուն ամենասուրբ Երրորդութեանն. որք և աղաչեցին զնա հոգ տանել բառնալ ի գաւառէ անտի զայն աղանդ, ուր ուրեք և ինքեանք ցուցանէին յիշխանութեան նորա ի Միջագէտս. զայս գիտացեալ Մագիստրոսի՝ վարեաց զամենեսեան յիշխանութենէ իւրմէ՝ զորոց կասկածէր ըմբռնեալ յայն աղանդ՝ և գնացեալ յԱպահունիս՝ յաւանն Թոնդրակ՝ քանդեաց զժողովատեղի նոցա, և հալածեալ զառաջնորդ նոցա զՂազար և զամենեսին պատուհասեալ՝ մաքրեաց զտեղին՝ և շինեաց ի նոյն ժողովատեղւոջ զեկեղեցի յանուն սրբոյն Գէորգայ:

(Ամք Տեառն 1051): Յայսպիսի գործոց Մագիստրոսին զահի հարեալ որ ի Թոնդրակեցւոց աղանդաւորքն էին՝ արանց իբրև հազարաց՝ թողեալ զաղանդն եկին և մկրտեցան յանուն ամենասուրբ Երրորդութեանն առաջնորդութեամբ Եփրեմ եպիսկոպոսի Բջնոյ՝ հրամանաւ ժողովոյն՝ որ եղև առ այս ի թուին Հայոց իբր Չ. այլք ևս հալածեալք յամենեցունց և ի հեթանոսաց ևս՝ գային յԱսորիս. և մկրտեալք մտանէին յեկեղեցի

սուրբ. իսկ որոց ոչն դառնալ կամէին՝ չը-
պիտալ օգնութիւն ուսանէք՝ (1055) դի-
մեցին առ կաթուղիկոսն Ասորւոց, և չա-
րախօսեալ զՄագիստրոսէն, աղաչէին զնա
վասն հալածանաց իւրեանց գրել մեղադ-
րութիւն առ նա. այլ թէ և գրեալ ի բա-
նից նոցին գրեաց նոյն կաթուղիկոս առ
Մագիստրոսն, այլ նա երկար բանիւք յայտ
արարեալ զխաբէութիւնն նոցա և զծա-
գումն աղանդոյն և զչար մոլորութիւնն
յոր մոլորեցան, յորդորէ և զնա մի ըն-
դունել զնոսա և մի ողորմել նոցա և մի
միաբանել և մի արժանի տեսութեան ըզ-
նոսա առնել: Եւ վասն Ղազարու, որ
գլխաւոր էր նոցին՝ ասէ. " Ղազարդ այդ՝
" որ այժմ զառաջնորդութիւն կուրացդ
" կոյրդ հաւանեալ ունի, բազմամեայ մեռ-
" եալն հոգւով՝ զոր ոչ Քրիստոսի է
" յարուցանել զդա չորեքօրեայ, այլ նե-
" ռին, որոյ է կարապետ, զի կրկնակի
" կործանեալ կորիցէ դա,,

Գրեաց և առ ոմանս ի նոցունց ա-
ռաջնորդաց Թոնդրակեցւոց բնակելոց
յաւանն Թուլայլ, որք խնդրեալ էին ի
Պետրոս Կաթուղիկոսէ, որ նստաւ յետ
Սարգսի՝ հաղորդել ընդ Հայս և մտանել
յեկեղեցի՝ յորում նա ինքն Մագիստրոս
ասէ. " չէ մեզ մարթ ընդունել զձեզ, զի
խաբէութեամբ մտեալ յեկեղեցի՝ որսայք
զանմեղսն,,: Եւ պահանջէ ի նոցանէ
նզովել զՍմբատ զառաջին առաջնորդ մո-
լորութեանց նոցա և զյաջորդսն մինչև
ցՅեսու. այլ և զՂազար համախոհիւքն
իւրովք հանդերձ. և յաւելու ասել, թէ
և գրեալ էիք, ասէ, " թէ մեք անիծա-
" նեմք և նզովեմք զՍմբատ, բայց ոչ զա-
" նէծսն ինչ համարիմք զձեր և ոչ զօրհ-
" նութիւնն. զայդ քաջ գիտեմք, որ ոչ
" զնա ընդունիք և ոչ զայլ ոք. վասն զի
" ի մէնջ ոչ էք, և ոչ այլ ոք ոչ երևի՝ ե-
" թէ ի նա հպեալ յանգեցայք: Բայց ե-
" րանի թէ յայնցանէ էիք, զորս անիծէ-
" իք, զի մեք զերծեալ ի մահացու Թունից
" ձերոց և ի գաղտնի նետից՝ ննջէաք ար-
" դեօք խաղաղական: Եւ ոչ միայն հեր-
" ձուածողացն համեմատ երանեմ ձեզ
" լինել, այլև հրէութեան և հեթանո-
" սութեան, և եթէ այլ ոք քան զայսո-
" սիկ չարագոյն . . . . . : Փրկիչն հրա-
" մայէ երկիցս բողոքել եղբօրն, ապա թէ
" ոչ լուիցէ, եղիցի իբրև զայլազգի և ըզ-
" հեթանոս. և ահա փոխանակ երկուց
" և երից բողոքելոց՝ զհարիւր և զեօթա-
" նասուն ամ՝ երեքտասան հայրապետք
" Հայոց մեծաց, նոյնչափ Աղուանից,
" և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահա-
" նայք և սարկաւագունք բողոքեցին
" ձեզ, և ոչ լուայք. խօսեցան և յան-
" դիմանեցին՝ և ոչ պատկառեցիք. ա-
" նիծեցին և արտաքսեցին՝ և ոչ զղջա-
" ցայք . . . . . . յուսամ ի տէր Աս-
" տուած, այն՝ որ նստին ի քրովբէական
" աթոռ, զի ի ձեռն իմ ձագեսցէ առ
" ձեզ զողորմութիւն մարդասիրութեան
" իւրոյ, մատնեալ ձեզ զչարութիւն ախ-
" տի և ամենայն սովորութեան, զոր յա-
" նօրէն և ի չար առաջնորդաց ձերոց
" դեղեալք և յղացեալ բերէք. ապա թէ
" ոչ՝ յուսալի է ինձ ի նոյն զօրութիւն
" բազկի Աստուծոյն իմոյ՝ զի մատնեսցէ
" զձեզ ի ձեռս իմ, և եթէ ոչ զղջաս-
" ջիք, յարուսցէ զայլ ոմն պահպանող
" և ցանկակարկատ, զի նա բարձցէ զձեզ
" ի միջոյ,,: Եւ այսպէս ինքնին Գրի-

զոր Մագիստրոս անհետ արար յամենայն տեղեաց զամենայն Թոնդրակեցիս, և ուր ուրեք մնացորդք երևէին, նոքա ևս միշտ հալածէին ի Հայոց։

Որքա աղանդաւոր Հայք յայն սակս կոչեցան Թոնդրակեցիք, զի այս աղանդ արմատացաւ զառաջինն ի Թոնդրակ Եւանի ի գաւառին Ապահունեաց՝ որպէս և ի վեր անդր կոչեցան Թոնդրակք. զոր Մագիստրոս ստուգաբանէ տեղի այրման, իբր թէ թոնիր լցեալ հրով։

Ոմանք ի սոցանէ բնակեալ յաւանին Թուլայլ ի Մանանղւոյ գաւառին՝ կոչեցան Թուլայլեցիք. և զայս ստուգաբանէ Մագիստրոսն՝ այլ թոյլ՝ այս ինքն թուլացեալ յամենայն պղծագործութիւնս։ Բնակեցան ի սոցանէ և յաւանն Խնուն կամ Խնուս, կոչեցեալ Խնունեցիք. որ և ստուգաբանութիւն ունի խնեալք ըստ Մագիստրոսին, այս ինքն խցեալք։ Յերբս յայսոսիկ յերամակս աղանդաւորաց կայր խորութիւն ինչ, զի բանք և կարծիք և գործ իւրաքանչիւրոց նոցա՝ տարբեր ի միմեանց էին յիրս ինչ՝ մի քան զմի չար։

Կոչեցան և Մանիքեցիք կամ Մանինեցիք վասն ունելոյ ինչ ինչ ի մոլորութենէ նոցա ըստ Մագիստրոսին, զոր և հաստատէ Պետրոս Սիկիլիացի Յոյն մատենագիր. որ զաղանդս Թոնդրակեցւոց ի Հայս մասամբ իւիք յիշատակեալ՝ կոչէ Մանիքեցիս՝ խառն ընդ պլազգիս. և զառաջին աղանդապետ նոցա դնէ Սարգիս՝ փոխանակ Սմբատայ. Ելն։

Սկիզբն աղանդոյս այսորիկ դնէ Մագիստրոս յաւուրց Յովհաննու Հայրապետի Ովայեցւոյ և Սմբատայ Բագրատունւոյ, և որպէս ի նամակին ասէ, " Եկաց այն մոլորութիւն ցաւուրս երեքտասան կաթուղիկոսաց ,, . այս ինքն յՈվայեցւոյն՝ ցՊետրոս Գետադարձ, իբրև յամս 170. այլ զի դնէ երբեմն և զամս 200. զայս առնու ի հնգետասան ամաց կաթուղիկոսութեան Յովհաննու, յորում նզովեցան Թոնդրակեցիք, մինչև ի մեծ ժողովն Հայքայ, ուր ջնջեցաւ գրեթէ իսպառ այն աղանդ։

ՅՕԴ. Ի.

Բուղայ ոստիկան՝ հալածող Հայոց զամս 5։

(Ամք Տեառն 849)։ Բնակիչք Սիմ լերին կոչեցեալ Սասունք, այն ինչ ընդ վտարանդութիւն Բագարատայ՝ որ կապանօք յղեցաւ ամիրապետին՝ գրոհ տուեալ միաբան բազմութեամբ սպանին զոստիկանն Հագարացի Ապուսէթ՝ ցրուելով զբազմութիւն զօրաց նորա, սրամտեալ բարկութեամբ ի վերայ նոցա ամիրապետն որ կոչիւր Ջափրէ, զմեծ զօր անհամար բազմութեամբ իբրև զաւազ ծովու՝ յանձն առնէ միումն յընդոծնաց իւրոց Բուղայ անուն, և առաքէ ի Հայս պատուէր տուեալ զամենայն իշխանս Հայոց առհասարակ կապանօք առ ինքն առաքել, և զայլ ամենայն մարդ, որ զսուր առնուլ կարիցէ, անխնայ սատակել, և որք յօրէնս Հագարացի դարձցին՝ ընդ իւր դարձուցանել առ ինքն, միայն թէ զսուրս քաջս և գեղեցիկս՝ միայն զաւակս ժողովրդեան ապրեցուցանել, եթէ չիցեն արժանիք մահու։

(Ամք Տեառն 850)։ Այսպիսի պատգամաւ հասեալ Բուղայի ի Տարոն գա-

ւան՝ և յաշխարհն ամենայն հրաւեալ զզօրն իբրև զհեղեղ գետոց, կալաւ և կապեաց զերկուս որդիսն Բագարատայ՝ զԱշոտ և զԴաւիթ և զամենայն պայազատս և զհամախոհս նոցին, ընդ որս և զԳրիգոր Մամիկոնեան թոռն Գրիգորի, և արգել զնոսա ի բանտի. և առ ի վրէժ բնակչաց Սիմ լերին, որոց սպանեալն էր զՅովսէփ, նախ առաջին ի ծործորս լերինն ապաստան սփռեաց, ի սուր սուսերի մաշեալ զամենեսին զբնակեալսն անդէն ի վայրս դժուարամատոյցս, և ապա արձակեալ զօրս ի գաւառն Տարօնոյ՝ կոտորեաց զամենայն Խութացիս ի վերայ Վաշգինակ անուն լերին. և անտի յարձակեալ ի հեծելազօրս գնդին Հայոց, որք ի Սիմ լեռնէ իջեալն էին, զբազումս ի նոցանէ կոտորեցին, և զբազումս եւս ձերբակալեալ՝ ածին կապանօք առ Բուղայ. յորոց նա ըստ պատուիրանացն՝ զընտիր ընտիրս ի բանտի առեալ առ ի դարձուցանել յօրէնս Հագարացւոց, զայլն ամենայն եւս խողխողել առաջի աչաց իւրոց. այսպէս անցոյց և ի յայլ բազում գաւառս այնր կողմանս: Յետ որոյ զյառաջագոյն կալեալսն ի բանտի զորդիսն Բագարատայ Աշոտ և Դաւիթ՝ առաքէ առ ամիրապետն հանդերձ ընտանեօք:

(Ամք Տեառն 851): Ի յաջորդ ամին՝ Աշոտ մեծ իշխան տանն Արծրունի՝ զի լուեալ էր զամենայն անցսն ի Տարօն, թէև պատրաստեալ էր տալ պատերազմ ընդ Բուղայի, յուսացեալ ի քաջութիւն և ի պէսպէս հնարս ձեռին, բայց նախարարք իւր քակեցան ի նմանէ, որք և միաբանիլ ընդ նմա յօժարեալ իսկ էին, ինքն եւս միայնակ չկարելով զդէմ ունել, և զաշխարհն եւս անձեռնհաս ի պահել, գնաց հեզութեամբ և ընծայիւք առ Բուղայ. այլ նա իսկ և իսկ կապեալ զնա ի շղթայս՝ և կալեալ զկին և զորդիս նորին և զազգականս՝ զամենեսին առաքեաց առ ամիրապետն. և ինքն Բուղայ զօրաց բազմութեամբ խաղացեալ յերկիր նորա յաշխարհ Վասպուրական՝ սփռէր զզօր ի գաւառս գաւառս ունել և կապել զամենայն այր, որ զդէն շարժել կարիցէ, զորս և ըստ պատուիրանին յերկուս վիճակս կենաց և մահու զատեաց, զվայելչահասակսն ի դարձումն հաւատոյ, և զանկարս և զապիկարս՝ ի սուր սուսերի սատակումն, որոց ոչ գոյր թիւ. զոր և արար ըստ օրինակին որ ի Տարօն գաւառի, մինչև արեան սպանելոցն գետօրէն զերկիր ողողել. և զպահեալսն ի հաւատափոխութիւն՝ իբրև ոչ ի նոյն հաւանեցուցանել կարէր, դառն տանջանօք խողխողեաց զբազումս ի նոցանէ. յետ որոյ պատրաստէր և ինքն խաղալ զօրօք յաշխարհ Երարատեան և հասանել ի Դուին մայրաքաղաք աշխարհին:

(Ամք Տեառն 852): Սմբատ Բագրատունի սպարապետ Աբլաբասն կոչեցեալ, տեսեալ զաղէտս թշուառութեան աշխարհին և գիտացեալ թէ ոչ կարէ այնուհետև զդէմ ունել, վասն օգտի հասարակաց՝ իբրև մերձ էր հասանել Բուղայ ի Դուին, բազում ընծայիւք գնաց առ նա. և նա պատուով ընկալեալ զնա՝ արար իւր առաջնորդ յամենայն գործս վնասու, և ուղեցոյց խորհրդակից ինքեան արարեալ, զի գտանէր զնա յամենայնի հաւատարիմ:

Մնաց ի Դուին նոքա հանդերձ, անտի ընդ ամենայն գաւառս Այրարատայ՝ ասպատակ սփռեալ կալան զամենայն այր՝ որ զսուր առնուլ կարէր. յորոց զոմանս խողխողեցին, և զոմանս տռամբ ձգեալ առ Բուղայ՝ ընտրեաց նա ի նոցանէ զառոյգս և զվայելչահասակս որպէս յայլ ակոյս՝ և կրկին կապանօք եդ ի բանտի ընդ առաջինսն. և զորս անպիտանս համարէր, կոտորեաց զնոսա անխնայ։ (Ամք Տեառն 853)։ Յետ աւուրց ինչ յառեալ կոչեաց զամենայն շղթայեալսն՝ եհարց զնոսա, եթէ ընկալցի՞ն զօրէնս իւրեանց. ընդ որ շատք ի նոցանէ ուրացան զՔրիստոս վասն մահուն երկիւղի, և շատք ևս հաստատուն ի հաւատս կացեալք՝ զմիմեանս յորդորելով ասէին, քաջս և արիս անուանելով սորա զմեզ՝ զինուորս առնել կամի օրինաց իւրոց. այլ արդ՝ եթէ ճշմարիտ քաջք իցեմք, ցուցցուք զքաջութիւն մեր առաջի Քրիստոսի զինու զօրութեան նորա, և մեռցուք քաջութեամբ վասն նորա, և նա ընկալցի զմեզ։

Զայս հաստատութիւն մտաց նոցին տեսեալ ոստիկանին և զքաջալերելն զմիմեանս, անհնարին տանջանօք չարչարեաց զնոսա. և իբրև ոչ այսու կարաց զնոսին դրդուեցուցանել ի հաւատոց՝ հրամայեաց մի առ մի այրել զնոսին։ Այսու օրինակաւ կատարեցան ի Քրիստոս ոգիք իբրև հարիւր և յիսուն, բայց ի մարտիրոսացելոցն նոյին օրինակաւ յայլ և այլ գաւառս։ Ի սոսա էին եօթն արք, որոց գլխաւորն Ատոմ՝ ի գաւառէն Աղբակայ յԱրտերան գեղջէ, որոց ընդ հրաշալի սխրալ կերպարանաց հիացեալ Հագարացի զօրաց և նոյն իսկ ոստիկանին, թէ և բազում պարգևաց խոստմամբ՝ և գերդաստանաց և իշխանութեան պատուոյ՝ ջանացաւ քակել զհաստատուն միտս նոցա յուրացութիւն Քրիստոսի, այլ տեսեալ՝ եթէ ոչ յանձն առնուին թողուլ զՔրիստոս, յետ տանջանաց բազմաց՝ հրամայեաց խաչել զնոսա. որոց և ընդ առաջնոց տօն կարգեաց կատարել Յովհաննէս Հայրապետ յ3ն մարտի ընդ նախնի Ատովմեանց յամին 853։

Այլ որք ամրացեալն էին յանմատոյց տեղիս նախարարք ոմանք, ածեալ զմտաւ, եթէ որդիք և կանայք անկանին հեզհեալ ի ձեռս անօրինին, ոմանք ի նոցանէ փակեալ զկիրճս ձորոյն ընդ որ անցանելոց էին մասն ինչ ասպատակող զօրաց Բուղայի, ուր և ի վերայ յարձակեալ նոցա՝ զորս սպանեալ և զորս փախըստական արարեալ՝ թափեցին զգերեալսն ի ձեռաց նոցա, և ածին ամրացուցին ի վայրս անառիկս։ Բայց բազմութիւն զօրացն ընդ այլ ճանապարհ դիմեալ ի վերայ նոցա՝ կալան զնոսա. և ածեալ առ Բուղայ՝ նորին հրամանաւ հատին զգլուխս նոցա յետ տանջանաց և յորդորանաց յուրացութիւն։ Ի սոսա անկան երևելիք ոմանք՝ Գէորգ յԱկեաց տոհմէ և Խոսրով ի Գառնեղենից տանէ. ի սոսա և այն յայլազգեաց անտի, որ տեսեալ զհամբերութիւն վկայից՝ դարձաւ ի քրիստոնէութիւն։

Յետ յաջողութեամբ կատարելոյ ոստիկանին զկամս իւր յԱյրարատեան աշխարհի՝ առաքեաց զօր բազում ի Սիւնիս և ի Սիսական, առնել ըստ առաջնոյն օրինակի, ունել զամենայն աւարս աշխար-

հին՝ մանաւանդ զիշխանն Սիսական ըզՎասակ և զԱշոտ զեղբայր նորա՝ զորդիս Բաբգենի. որոց հասեալ անդր, թէ ոչ ուրեք՝ բայց և ոչ ինչ պակաս քան զայլ գաւառս՝ արարին կոտորած մեծ և լցին զաշխարհն դիակամբք. ընդ որ զահի հարեալ իշխանաց աշխարհին՝ փախստեայ զերծանէին յանառիկ ամրոցս ի գաւառին Բաղաց: Բայց Վասակ իշխան պաշարեալ ի զօրացն, և զերծեալ վերստին՝ անկաւ ի Կոտայս գաւառ. այլ երբեւ զօրքն պնդեալ զհետ հասին նմա ձեպով՝ չգտեալ նորա անդէն թագստեան, դարձաւ ընդ կրունկն յետս և զամենեսին չարաչար յերկիր կործանէր, հասեալ մինչև ի զօրավար նոցա և սաւաթուր զնա յերկիր հարեալ՝ զնոյն անկանէր յարևելս կոյս յերկիր Գարդմանաց առ Կորիձ անուն իշխան տեղւոյն: Սա զառաջինն պատուով ընկալեալ զփախուցեալն Վասակ՝ ապա խաբէութեամբ կապեալ զայրն քաջ՝ (854) առաքէ զայն ոստիկանին ի Դուին՝ պատւոյ մեծի առ ի նմանէ ակն ունելով: Բուղայի առեալ զՎասակ ուրախ եղև յոյժ, և պատգամ առաքեալ առ եղբայր նորա Աշոտ և առ մայրն գալ առ ինքն, ապա թէ ոչ՝ ասէ, սպանից զՎասակ. այլ չև զեկուցանեալ առ նոսա ժամանեալ՝ ասպատակք զօրացն կալեալ զնոսա՝ ընդ որս և զայլս յիշխանաց՝ ածին կապանօք ի Դըվին առ Բուղայ. զորս և առեալ նորա ընդ առաջին կապելոցն՝ խաղաց ի Ներքնակողմանս արևելից, պատգամ յղեալ առ սպարապետն Սմբատ, որ չէր յայնմ ժամանակի առ իւր:

Երբեւ եհաս առ Բուղայ՝ սպարապետն իմացեալ ի նմանէ եթէ Ատրներսեհ իշխան տէր Խաչենոյ՝ նստի ի նոյն իսկ յամրոցին Խաչենոյ՝ յԱրցախ աշխարհի, անդր խաղացեալ զօրօք, և պաշարեալ զամրոցն էառ և կալաւ զԱտրներսեհ և զազգատոհմ նորա և զորս երևելիս, զամենայն որս պատերազմօղս յամրոցին կոտորեաց ի բերան սրոյ. և լուաց զերկիրն յարեան անմեղաց: Ապա եմուտ յաշխարհն Ուտի ի Գարդմանացւոց գաւառ, ուր կալանաւորեալն էր Վասակ Սիսական. առեալ զբերդն կալաւ զմատնօղն Վասակայ՝ ի կապանս բանտի. կալաւ և զիշխան աւանին Տուս՝ Ստեփաննոս անուանեալն Կոն. սորա ազգն կոչէին Սևորդիք ի նախնոյն իւրեանց: Այլ թէ բաց ի կալանաւորելոցս քանի՞ կոտորածս արար Բուղայ յՈւտի՝ չեղև հնար Յովհաննու կաթուղիկոսի ընդ գրով արկանել:

(Ամք Տեառն 855): Անցեալ և յաշխարհն Աղուանից՝ հնարիւք իմն կալաւ զիշխան նոցա զԵսայի և զամենայն ազգականս նորա, և զամենայն մեծամեծս տեղւոյն, ի սուր սուսերի մաշելով զաշխարհն ամենայն, յորս ծովանայր արիւն անմեղաց: Ապա դիմեալ ի վերայ Տփխեաց՝ արար վնաս բազում. ուր և ի փայտի հանեալ զիշխանն Վանանդայ զՍահակ, դարձեալ ի Պարտաւ՝ սպան զՄոկաթէ Վանանդացի ի վերայ խոստովանութեան հաւատոյ: Աստանօր ժողով կազմեալ ոստիկանին՝ զկապելոցն գերելոց՝ էած զամենեսին ի Դուին քաղաք, ուր և համագունդ ի մի խառնեալ և զի դիպահող եղեալս անդէն խաղացոյց ընդ իւր առ Ամիրապետն ի Բաղդատ՝ ընդ իւր ունելով և զսպարապետն

Սմբատ զեւ ը զհաւատարիմ խորհրդական ի գործ չարութեան, որոյ ի վարձ փոխարինի հատոյց ամիրապետն՝ զբանտ և կապանս ի մահ՝ զարդարապէս հատուցումն՝ թէ և խոստովանութեամբ ի Քրիստոս, որով և Խոստովանողն կոչեցաւ. իբր զի ի ներկայանալ ամիրապետին բոլոր կապելոցն ի Բուղայէ, և ի ստիպելն նորա զնոսա յուրացութիւն, կամելոց և զՍմբատ և եդ ի բանտի. յորոց ոմանք զանգիտացեալք՝ դարձան. այլք զրեթէ ամենեքին՝ արտաքուստ ուրացան զքրիստոնէութիւն, բայց երեքն ի նոցունց՝ Ստեփաննոս Կոն կոչեցեալ՝ Գրիգոր Մամիկոնեան և Սմբատ սպարապետ՝ չառնլով յանձն զուրացութիւն, Ստեփաննոս տանջանօք կատարեցաւ, Գրիգոր փախստեայ ի բանտէ՝ հանեալ ի Բագրեւանդ գաւառ, ի Գաղանածագ անուանեալ տեղին, ուր և յետ եօթն աւուրց վաղճանի՝ զգլուխն առ ամիրապետն առաքի յԱշոտոյ որդւոյն Սմբատայ. և Սմբատ զղջմամբ սրտի՝ աւանդէ զհոգի ի բանտին: Զօրմէ ի հատորն Դ:

(Ի շարունակելոյ)

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ՀՌԻՓՍԻՄԷ.

Աչքերնիդ դարձուցէք Հռոմայ աշխարհին ճանապարհները. արեգակը վերջին ճառագայթները ամփոփած երեկոյեան շամանդաղը կամաց կամաց կպատէր՝ խումբ մի ծպտեալ աղջիկներ Հռոմայ քաղաքին դռնէն ելան. երեսնին քօղով ծածկուած ոչ ոք զիրենք չճանչցաւ: Պահ մի հազիւ թէ անցած էր, նոցա ետեւէն դուռն դուռն լեգէոններ ելան, և քաղաքին դռները փակուելով՝ ոչ մուտք և ոչ ելք կթողուն. սահմանագլուխ աշխարհները զօրաց բանակներ զինեալ կեցած են Հռոմայ թագաւորին հրամանաւ, պահապանք կքալեն ամեն պողոտայ, կքննեն, կհարցանեն և փախստական աղջիկ մի կփնտռեն: Բայց այն աղջիկը ընկերակիցներով իմիասին արդէն Հռոմայ աշխարհէն հեռացած Հայաստանի սահմանը մտան. քաղաքին դռները կրկին բացուեցան, լեգէոնները յոգնած յետ դարձան և չգտան այն աղջիկը. Դիոկղետիանոս տրտմութեան և յուսահատութեան մէջ ընկղմած հրովարտակ կղրկէ հեռաւոր աշխարհներ ի Պարսկաստան, ի Յունաստան, յԵգիպտոս, և ի Հայաստան, որ այն փախստական աղջիկը փնտռեն, գտնեն և իրեն ղրկեն:

Հռոմի ամօթոյն օրերն էին. Հայոց թագը Տրդատայ ճակատը կճաճանչէր, և արքայական գաւազանին Հայաստան խոնարհած՝ խաղաղութեամբ և փառօք կըծաղկէր. Պարսկաստան նուաճեալ և ընկճեալ՝ չէր յանդգնէր ապստամբ հանել. թշնամեաց զէնքերը փշրուած, հատած, նոցա բանակները Հայոց հսկայ թագաւորին ջարդած սպառած, գերեզմանաց մէջ փտած, կնքած էր. արեմուտք հետը դաշնակից, արեւելք իրմէ կդողայ, և Հայաստանի բազմաշարշար սուրբ Հայրը Արտաշատու Խոր-Վիրապին մէջ ի բանտ մահու արգելած, դիցապաշտ թագաւորին ձեռքէն ճշմարիտ հաւատքին հա-

մար և Ընակայ դաւաճանութեան պատիժը քաշելով Հայաստանի փրկութեան համար կաղօթէ։

Նոյն ատեն Ոսկեմօր Ոսկեծին դից պաշտաման տաւաւօտն էր. Թագաւորանիստ քաղաքը Վաղարշապատ ալէկոծեալ կդղրդէր. Ժողովուրդը ճանապարհաց գլուխները դիզուած, ոմանք Թագաւորական ապարանքը, և ոմանք ևս քաղաքին հիւսիսային կողմը կվազեն. ահա դաւանակիր ծերունի մը նոյս արքունի պողոտայէն, որ ամեն ճանապարհաց գլուխները կանգնելով այսպէս քարոզ կկարդար. "Այսօր Հայոց քաջայաղթ Թագաւորին հարսանիքն է, վազեցէք հիւսիսակողմը Թագուհւոյն ընդ առաջ":

Ըստ արքունի պերճութեան ամենայն ինչ շքեղ և ճոխ էր, և հարսանեաց հանդէսը սկսած. Թագաւորական ապարանքին վերայ այն արծուանշան դրօշները կծածանէին՝ որոնք շատ անգամ Թշնամիք պատերազմաց մէջ Տրդատայ բանակին ճակատը տեսած էին. արքունի նուագարանը քաղցր կհնչէր, կերգէր Թագաւորին Հռոմոց աշխարհին մէջ արած քաջութիւնքը և մղած պատերազմաց յաղթանակները. դիւցազն նահապետին Հայկայ ընդ Բէլայ կռիւը, Շամիրամայ տարփանքը և Արայ քաջին դիւցազնակերպ նահատակութիւնը: Հոն էին հաւաքուած նաև արքունի հրամանաւ Գողթն գաւառին քաջարուեստ բամբիռն զարնողները, որոնք քաղաքին մէջ շատ տեղ ախումբ բոլորած այն օրուան հանդէսը միայն փառաւորելու համար կնուագէին, և հայրենի աշխարհին յիշատակները գեղեցկահիւս իմաստից ճարտարութեամբ կենդանացնելով ժողովրդեան սրտին հրճուանք և խնդութիւն կացդէին. մանաւանդ գեղեցիկ այլաբանութեամբ կերգէին առէպ Ալանաց պատերազմը և Սաթինկան հարսանիքը. որոց ներդաշնակութիւնք հրճուացած կգոչէր. "Դարձան մեզ մեր նախնի հսկայից օրերուն փառքը":

Թէպէտ և Հայաստան դեռ իւր Թագուհին չէր ճանչնար, բայց կզգար որ արժանի էր այն մեծ փառաց. Ընակայ տըւած մահաբեր հարուածէն վերջը խնդացած չէր, և ոչ հայրենի հանդէսներ կատարած. գտաւ Թագաժառանգը՝ որ Սասանեան անօրէն սուրը խորտակելով ազատեց զինքը բռնակալութենէ, բայց խնդութիւնը կատարեալ չէր, վասն զի այրի էր Հայոց գահը. որոյ վերայ հիմայ աշխարհաց զարմանալի և Թագաւորաց նախանձելի Թագուհի մը բազմեցնելով, եթէ ոչ նորա գեղեցիկ երեսաց՝ բայց սուրբ ոտներայ պիտի աղաչէր միշտ:

Երբոր հարսանեաց հանդէսը ըստ կամաց Թագաւորին կկատարուէր, հրաման տուաւ որ Հայոց Թագուհին առաջնորդ բերեն. գունդագունդ կընթանան, զօրապետք հանդերձ զօրօք շքեղաշուք կարգ կարգ ըստ օրինի պատերազմի երան, և պատեցին ճանապարհները ուսկից Հայոց Թագուհին պիտի անցնէր. անկէ վերջը ձիաւորաց գունդը եկաւ, և քաղաքին հիւսիսակողմը տարածուեցաւ. ոսկեպատ կառքեր հանէ հան արշաւելով կըթռչէին, շքեղ գահաւորակներ Թագաւորին սպասաւորները կտանէին. նախարարք և դրանիկ պարգևներով ընդ առաջ կդիմեն, և նոյն տիկնայքը հարսանեաց պատմուճանները կկրեն. իսկ տոհմական

օրիորդք ի նշան մեծարանաց ճանապարհայ վերայ խումբ խումբ կանգնած ձեռքերնին ծաղկեայ պսակներ, կսպասեն Թագուհւոյն՝ որ դարշապարաց տակը տրուին:

— Բայց ինչո՞ւ կուշանայ Հայոց Թագուհին. սուրհանդակներ կերթան, կդառնան՝ և լուր չեն բերեր. նայինք ո՞վ դարձաւ. ահա ամբոխը. ի՞նչ կխօսին. «Տեսանք զինքը դեռ հաւասար չքնաղ և հրաշալի, որոյ նմանը Թագաւորաց ապարանքներուն մէջ չգտնուեր. Դիոկղետիանոսի ձեռքէն փախստական է, որ կուզէր զինքը մեծատարած աշխարհին Թագուհի պսակել. անունը Հռիփսիմէ, Հռոմայ Թագաւորաց ցեղէն քրիստոնէից կրօնքը կըպաշտէ»: Այս այն աղջիկն է՝ որ Հռոմ քաղաքէն ծպտեալ ընկերակիցներովը կըփախչէր:

Իսկ մեք առաջ անցնինք, երթանք Վաղարշապատու հնձանքը, և ականատես լինինք հարսանեաց յուղարկաւորութեան հանդիսին: Ելաւ ոտքի կանգնեցաւ, իւր ընկերաց մէջ ամենէն բարձրահասակ, չքնաղ և նազելին էր. նայեցաւ անլուրջ հեթանոս ամբոխին՝ որ եկեր էին զինքը ընդունել. տեսաւ մեծամեծ պատրաստութիւնները՝ որ իրեն համար Թագաւորէն հրամայեալ էր. «Չքնաղ օրիորդ, գոչեց ամբոխը, զարդարեալ պատրաստ է առագաստ, որ երբեմն անողորմ թշնամին դաւելով ուզեց աւերել և խաւար բերել մեր աշխարհին գլուխը. դու արդ պիտի պայծառացնես այն առագաստը կըկին: Ընդունէ Թագաւորին և ազգին հրաւէրը, եկ երթանք փառաց գահը բազմէ, և պըսակինք զքեզ այն պսակաւ՝ որով պըսակուեցան մեր Թագուհիք. քու անդրին պիտի կանգնենք Անահտայ մեհենին մէջ՝ որոյ հաւասար չքնաղ ես. դքեզ պիտի գգուէ սրդապանծ կորովին Տրդատ, որոյ բազուկները կպատեն և կզրկեն զՀայաստանի համայն, և դիցափայլ երեսացդ առջը երկրպագութիւն պիտի ընէ»: Լսեց Հռիփսիմէ հրաւէրը, դողալով և պատկառելով ծածկուեցաւ ընկերացը մէջ. բայց Թագաւորին սպասաւորքը կերթան կգտնեն զինքը, կուզեն աղքատին զգեստները մերկացնելով ծիրանիներով զարդարել և առնել երթալ:

Խռովեցան, իրար անցան ընկերակիցք, և չեն գիտեր թէ ինչպէս զինքը ազատեն. իսկ հեթանոսք ապշած կզարմանան թէ ինչո՞ւ այս մեծ փառքէն զինքը կզրկէ: Իսկ Հռիփսիմէ ո՞ւր է, միթէ՞ չուզէ երթալ.— Իւր դայեկին Գայիանէին գիրկը ապաւինած՝ նորա մտիկ կանէ. «Փախանք, որդեակ իմ, հեթանոս ամբարիշտ Թագաւորի մը ձեռքէն, որ սրբակրօն հօրդ մաքրութիւնը երկրաւոր փառօք կուզէր աղտեղել, և մատնուեցանք ահա մի ուրիշ անօրէն բռնաւորի ձեռք. դու ընտրուած ես ոչ Թագաւորաց՝ այլ Աստուծոյ համար. յիշէ որ դու ես այն ամենայն փառքը ունէիր, բայց ատեցիր, ձգեցիր հայրենի ճոխ տունդ, մերկացար ծիրանիդ, և զՔրիստոս միայն սիրեցիր»:

Թագաւորին սպասաւորքը հրաւէրը կկրկնեն, կստիպեն, բայց Գայիանէ սիրելի սանը բազկացը մէջ ամրապինդ գրկած է դեռ ևս. խանդաղատեցաւ Հռիփսիմէ, զօրացաւ հաւատքով, թռաւ, ելաւ դայեկին գրկէն, և ձեռքերը խաչաձև ի սըրտին ամփոփած ծունր դրաւ, և լռիկ հոգ-

ով Աստուծոյ կաղօթէր. և այս ոտքի կանգնելով աղդու ձայնիւ գոչեց հեթանոս ամբոխին. «Դու տարէք, եա, ծիրանին և պատմուճանը՝ զոր ես իմանկութենէս մերկացայ, և տուացէք ձեր թագաւորին որ՝ նուիրեալ եմ Աստուծոյ հոգւով և մարմնով, և ուխտեր եմ զինքը միայն սիրել մահու չափ»:

Իսկ թագաւորը ուրախ և շքեղ գահը բազմած թագուհւոյն կսպասէր. ոչ պատերազմաց և ոչ աշխարհին վերայ կմտածէր. զզուանօք կնայէր յաղթական երկաթին վերայ, որով թշնամեաց գլուխը փշրած Հայաստանի փառքը և համբաւը ընդ ամէն աշխարհ հռչակած էր. սոսկալով կը յիշէ պատերազմները և աչքին առջև կը բերէ յաղթութեանց դաշտերը, երբոր ինքը լուսակիզ սեաւ երիվարը աշտանակեալ, ետևէն քաջայաղթ բանակը ընթանալով, թշնամեաց ընտիր գունդերը գետին տապալելով ընտանեաց և աշխարհաց բաղդը կվատարէր. այլ նոյն միջոցին սիրով հրճուացեալ կզգար, և կերազէր միայն առագաստին երջանկութիւնը և պայծառ բաղդը. ահա իշխաններէն ոմանք կհասնին, և կպատմեն եղած անցքը։ —

— Մեծազօր թագաւորին կերպարանաց վրայէն սիրոյ ժպիտը անհետանալով խնդութիւնը դարձաւ ի տրտմութիւն. հիացաւ, կատղեցաւ. «Ուրեմն մէկ անծանօթ օրիորդն մը, գոչեց, զոր ես Հայոց թագուհի ընտրեցի, Գրիգորի Աստուածը կպաշտէ, որ կամացս չհնազանդեցաւ և չպաշտեց զԱնահիտ, չարչարեցէք, տանջեցէք և հանեալ Խոր Վիրապին մէջ թաղեցէք», ասաց թագաւորը, կատղած գահէն ելաւ, կչրջէր և կկռկռայր. և դառձաւ իշխանաց որոտալով կըսէր. «Ինչ պիտի ասեն արևելք և արևմուտք՝ որ Տրդատ չկրցաւ աղջկան մը յանդգնութիւնը կոտրել. գնացէք բռնութեամբ բերէք»:

— Այս հրամանը թագաւորն տուաւ. իսկ իշխանք և սպասաւորք կփութան հրամանը կատարել. հասան Վաղարշապատու հնձանքը, յարձակեցան, յափշտակեցին զՀռիփսիմէ ընկերակցացն գրկէն, երբեմն վերամբարձ՝ երբեմն ալ ընդ քարշ կտանէին զինքը թագաւորին։

Ո՞ւր է հիմայ Հռիփսիմէ. թագաւորին ապարանքը առագաստին մէջ արգելեալ. երթանք զինքը հոն ևս տեսնենք: — Ահա բացուեցաւ առագաստին դուռը. ով ներս մտաւ. Հայոց քաջայաղթ, հսկայ, աշխարհակալ, անընկճելի, սէգ թագաւորն Տրդատ, Արքայական ամենայն պերճութիւնը և շքեղութիւնը վրան կկրէր, որոյ նման տեսած էր զինքը շքեղ Հայաստան այն օրը միայն՝ երբոր փախստական թագաժառանգը յաղթական զինուք դառնալով Անահտայ բագնին վրայէն արքայական թագը և գաւազանը ընդունելով Հայոց գահը կժառանգէր: Ծիրանին Գոթացւոց Հռչէ թագաւորին կանանցէն յափշտակած էր, մատանին Հռոմայ Դիոկղետիանոս կայսեր, իսկ գլխուն թագը հօրը մեծին Խոսրովայ, որով Վաղարշակ և իւր յաջորդք պսակուեցան:

Այսպիսի շքեղութեամբ Հայոց թագաւորն առագաստը մտնելով ծիրանի և մատանի պարգև կտանէր նմա. կատղած, շփոթած թագաւորը դարձեալ սիրով ամոքեալ հրճուացած կերևէր. բարկութեան մէջը փարատած մեծարանքը կը յայտնէր. չէ՞ր այն ահարկու ցցուած յօն-

քերը՝ որ թշնամիք շատ անգամ տեսած սարսափած էին, ոչ այն վրիժառու աչքերը՝ որով Պարսից աշխարհին վերայ կնայէր և կչափէր, և ոչ այն ահեղ ձայնը՝ որով հիւսիսային ազգաց գոռալով կը թնդացնէր զիրենք. այլ խնդութեամբ և սիրով զգածեալ կուզէր Հայոց թագուհւոյն յանդգնութեանը ներողամիտ լինելով սիրոյը գրաւել: Հիացաւ թագաւորը զինքը տեսածին պէս, առաջատարին պերճութիւնը քան նորա գեղեցկութիւնը անհամեմատ խոնարհ էր. երանի՜ տըեսաւ, երջանիկ սեպեց զինքը քան զԴիոկղետիանոս, որոյ կորուսած բաղդը ինքը գտաւ և պիտի վայելէր. և բոլոր արևելեան ազգաց գեղեցիկ և ընտիր թագուհիք իբրև նաժիշտ պիտի համարուէին Հայոց չքնաղագեղ դշխոյին քով:

Թագաւորը երկայն ատեն վրան կնայէր, և վերջապէս այսպէս խօսիլ սկսաւ. « Ես եմ, ասաց, այս ճոխ և մեծազօր ազգին թագաւորը. ինձմէ առաջ գահիս վերայ Հսկայք և աշխարհակալք իշխեր են, որոց փառքին և քաջութեանցը նախանձորդ և կարող եմ. անունս Հռոմայ մէջ հռչակեալ, Պարսկաստան և Ասորեստան զիս կճանչնայ. զքեզ ընտրեցի բիւրաւոր աղջիկներուն մէջէն արքայական առագաստս պայծառացնելով փառացս հաղորդ ընել »: Եւ սկսաւ չափել մեծատարած թագաւորութեան սահմանը, համրեց նախարարաց գահերը և զօրաց բազմութիւնը, պատմեց հին և նոր յաղթութիւնքը, մեծութիւնը և ճոխութիւնը առջևը թափելով կրկնեց, « Որ հետս իշխելով այս ամենայն փառքը պիտի ժառանգես եթէ յանձն առնես Հայոց թագուհի լինելու », և պարզեց իրեն ծիրանին և մատանին:

Գոչեց Հռիփսիմէ զօրացեալ թագաւորին երեսն ի վեր, ամփոփեց ձեռքը, և քայլ ընդ քայլ ետ քաշուելով մերժեց, վանեց իրմէ: — « Ի՞նչ յանդգնութիւն է, գոչեց թագաւորը, զքեզ՝ անծանօթ աղջիկ, անարգ և թշուառ վիճակէ մինչև թագաւորութեան գահը բարձրացնելով բազմասերունդ քաջ ազգի թագուհի կը պսակեմ, եթէ կտեսնես որ սէրը սրտիս մէջ կլայնայ, սուրը՝ մահն ալ ձեռացս մէջ կվառի, միայն գեղեցկութեանդ համար կխնայեմ և կներեմ քեզ »: Իսկ Հռիփսիմէ դարձաւ այսպէս թագաւորին պատասխանեց. « փառքերէդ կհրաժարիմ և պիղծ կհամարիմ առաջարկդ. պատրաստ եմ մեռնիլ երկնաւոր թագաւորիս սիրոյն համար, որում զինուորած՝ խոստացեր եմ հաւատարիմ մնալ. թող տուր զիս իմ անարգ վիճակիս մէջ մնամ, որ ես կամօքս ընտրեր եմ »:

Ոչ ոք բազկաւ և ոչ ոք զինուք կրցեր էր խորտակել այն թագաւորին դէմ. ուստի զգաց մէկէն անօթեանին զօրութեան չափը, գազանային կատաղութեամբը դարձեալ եկաւ գտաւ զինքը, ժանտացաւ աչքը, կերպարանքը գունացաւ, ժողովեց ուժը, հսկայացաւ, արձանացաւ, ուղղեց ինքը զինքը, և ոսկերաց զօրութեան վստահանալով յարձակեցաւ Հռիփսիմէի վերայ:

Վազենք, մանենք թագաւորական ապարանքէն ներս, և հանդիսատես լինինք այս մեծ նահատակութեանս. ինչպէս թշնամւոյ դէմ՝ նոյն օրինակ կմաքառի, և յաղթել կճգնի. կգոչէ, կսաստէ, ահեղ

աչքերը տնկած՝ սարսափ կուգէ տալ, մէկ քայլ յառաջ կյարձակի, երեք քայլ ախոյեանը զէնքը կվանէ և կընկրկէ, կը փորձէ կրկին՝ կնահանջէ կրկին. արի և անյաղթելի է հակառակորդը, աներևոյթ զօրութիւն մը կզօրացնէր զէնքը, որ հզօր էր քան զԹագաւորին բազկաց ուժը։ Կռուեցաւ բնաւորը բոլոր ուժով, և ըստ պատերազմական արհեստին ամենայն հնարագիտութիւնք ի գործ դրաւ, բայց չկրցաւ յաղթութիւնը ժառանգել, որ մեծ և գեր ի վեր կհամարէր քան զամենայն յաղթական դափնի։ Այն ատեն զիջաւ, խոնարհեցաւ, և սկսաւ յաղթականին գթութիւնը խնդրել, և նորա առջևը պարզելով ասաց. "Տես խոնարհեալ ոտքերուդ տակ քաջ ազգիս Թագաւորը, մի՛ առեր զինքը, և մի՛ զրկեր առաջասաս երջանկութենէն՝ որ քեզմով կյուսայ, եթէ Թագաւորութիւնս և ժողովուրդս քեզ կհամարիս՝ երթամ յաղթեմ աշխարհաց, աւերեմ, կործանեմ, Թագաւորաց Թագուհեաց Թագերը յափշտակելով բերեմ, թափեմ ոտքերուդ տակ, և զքեզ ազգաց և աշխարհաց են Թագուհի կարգեմ"։ Բայց յաղթականը չզիջանէր աղաչանացը, կուռէ, կնախատէ զինքը, և զայրացեալ վերան կնայի։

Մինամարտեցան մինչև գիշերուան մէկ պահը, և այս առաջին անգամ էր որ՝ աշխարհաց յաղթող Թագաւորը յաղթուած գահին վերայ ընկաւ։ Ինաց յուսահատեալ. տեսէք, մի՞թէ կճանչնաք՝ ծիրանին պատռտած, գլխոյն Թագը և Թագաւորական նշանը ոտնակոխ ցիր և ցան գետնին վերայ կշողան, ամօթապարտ կնայի, կտեսնէ յաղթականը անողոքելի զինացը կանգնած, բայց վրէժխնդիր ըլլալու զօրութիւն չունի։ Իսկ այս այն Թագաւորն է, որ Հռովմայ կրկէսին մէջ բազկաց ուժովը ձիարշաւ կառքերը կը կանգնեցնէր, որ Հռովմայ աշխարհը մենամարտութեամբ Գոթացւոց Հոչէ Թագաւորին ձեռքէն կազատէր, որով և ինքը արժանի կըլլար իւր նախնեաց գահը ժառանգել, որ իւր զօրապետին՝ Լիկանէսին վրանին դուռը միայնակ կանգնած իւր տէրը կպաշտպանէր բոլոր զօրաց բանակին դէմ; որ վայրի ցուլերուն եղջիւրներէն բռնած թօթուելով կկործէր, որ փիղերուն մէջ հետևակ մանելով՝ իրարու վերայ գետին կտապալէր, որ զԳեղռեհոն պատերազմի դաշտին մէջ մէկ սրոյ հարուածով զինքը և զձին միջակտուր կընէր. այս այն Թագաւորն է՝ որ Քրիստոսի նահատակը զԳրիգոր տասն և չորս տարի վերջը Խոր-Վիրապէն հանեց, հալածեց Հայաստանէն դիցապաշտութիւնը, և եօթը օրուան ճանապարհ հեռացաւ, գնաց Մասիս լեռնէն վեր, և ութը հատ անտաշ սատւար քարեր կռնակը զարնելով՝ կբերէր Հռիփսիմէի վկայարանին հիմը կձգէր։

(Ի յետագայս)

Մ. ՊԱՆԵԱՆ.

ԿՏԱԿԱԳԻՐ
ՀՌԻՓՍԻՄԷ ԱՐՔԱՅԱԴՍՏԵՐ
ՅԱՆՈՒՆ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՈՒՑ ՄԱՂԱՐԴԱՑ·

Կամաւ և ողորմութեամբ բարերարին Աստուծոյ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ գրեցաւ կտակագիրս անքակ, ի Թ. ՆԿ թուականին Երամեան Թագաւորին *), և Ահեկ ամսոյ Ժ.Օ. ին, և ի Հովուէր հովուութեան Տեառն Խաչկայ Հայոց Կաթողիկոսի Շլինօղէ, և ըստ մեծի տէրութեան արևելից և հարաւոյ Հայոց՝ Սահակայ Աշոտ յորջորջեալ անուամբ Շահանշահի, ես Հռիփսիմէ դուստր բարեպաշտ թագաւորին Աշոտոյ Շահանշահի.

Յետ հինգ ամաց շինութեան Հաւրն իմոյ զսուրբ Նախավկայի զԱստուածածնական տաճարն Մաղարդայ վանից, որ ի Շամբիձոր, եկեալ սէրս հաւատով և ընծայիւք բազմաւք եկի ի դուռն սորին վասն անսնութեան հրաշագործ սրբոյ Ոսկանին, և Տեառն Բարգենայ աշխարհապատուոյ եպիսկոպոսին, և վասն ցաւոց հիւանդութեան անձինս։ Զի գոլից զողորմութիւն և բժշկութիւն ի սուրբ Նախավկայէն, և Գէորգայ զաւրավարէն, և անխս մի դադարեալ առի զաւրհնութիւնս սրբոց ճգնաւորացն։ Եւ եկի դառնալ ի յաւանն մեր ի քաղաքն յԱնի։

Եւ հասեալք ի դեւղն Աստապատ, անկայ ի մահիճս հիւանդութեան, և եհաս կենաց իմոց զրաւ. վասն որոյ առաքեալ կոչեցի զմեծատուն տէր Բարգէն առաջնորդ սրբոյ ուխտին Մաղարդայ վանից հանդերձ զղերիկոսովք, և արարի կտակ։

Զի որպէս հայրն իմ Թագաւորն Աշոտ կոչեցեալն Շահնշահ եկեալ էր ի սուրբ ուխտն Նախավկային հանդերձ մեծամեծ իշխանաւք և ազատագունդ զաւրաւք, և տեսեալ զսուրբ ուխտին երեք տաճարն խախտեալ, որ էր յանուն սուրբ Նախավկային, սուրբ Աստուածածնին և սրբոյն Գէորգայ շինեալ և հիմնեալ ձեռամբ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի.

Զոր վերստին եւ շինել Թագաւորն Շահնշահ հրաշագան եկեղեցի և թողզինկեղեցականն ընծայսն. եւ և զայս ինչ նուէրք դատատեղերս սրբոյ Յակոբայ եկեղեցոյն դիմաց զայգոյ հողն, (և Շամբոյ երեք ջաղացն, և ջաղցի գլխի սերմանուտն՝ չորս հազարն, և դնաւանտեղն։) Զորս ընծայ դնեալ շնորհեաց՝ և ո՛չ բռնութեամբ, և եա յիշատակ հոգւոյ իւրոյ և բարեպաշտ ծնողացն. նոյնպէս և ես Հռիփսիմէս սիրական դուստր հաւրն իմոյ Թագաւորի կուսութեամբ կեցեալ, ոչ ունելով յիշատակ ի վերայ աշխարհի, զայս դատատեղերս տնեցի Աստապատ, և ե-

(*) Արտագրողն՝ զայս կտակագիր գտնելով ի Նախավկայի Վանս մի ձեռագրքում՝ բայց ուղղութեամբ մի քանի վրիպակները չէ կարողացած նկատել՝ ինչպէս այս [illegible]՝ որ գուցէ [illegible] պիտի լինի։ Կարելի է որ գտնուած օրինակին մէջ ևս այսպէս սխալ էր։

Ի սորա ևս կան սխալներ՝ ինչպէս Նա և Թուականաց մէջ տարբերութիւն կայ, բայց մեր Ազգային պատմութեան կարևոր աղբերց իբրև պիտանի մի դուզնաքեայ հնութիւն արժան կհամարիմք զայս հրատարակել՝ ներողութեան սալով պատմական նկատելի մի քանի սխալը ևս, որ գուցէ օրինակողէն սպրդած է։

Պէտք է նկատել նա և՝ զի այս կտակի մէջ ի վերջին ժամանակս անհարազատ ձեռքեր ևս խառնուած են։ Ծ. Խմբ. Ար.

տու յիշատակ հոգւոյ իմոյ, և ընծայ անքակտելի ի դուռն սրբոյ Նախավկայիս Մաղարդայ, որ է սերմամուտ Ն գրկի, որ է հարիւր յիսուն քէռան սերմամուտ:

Եւ է Աստապատու հիւսիսային կողմն հանդէպ Եղևանուն, չորս հատուածն (. . .) մէկ դէմն Երասխ կոչեցեալ, մէկ Երևանայ ճանապարհն, մէկ Նախիջևանայ ճանապարհն, մէկ Տախտոցն:

Զայս արտս գնեցի և ետու ընծայ սուրբ ուխտին Մաղերդայ, և անդի շիրմի իմոյ. զի մի՛ թաղեսցեն յօտարժառանգութեան և գերեզմանի, այլ ի մէջ ագարակիս թաղեսցեն զազականացու մարմինս, զի մի՛ անյայտ լիցի:

Եւ զմոլորն ամ յամէ ցանեսցեն, և զարմտիսն ժողովեալ ի սուրբ Նախավկայի ուխտն տարցեն, որպէս զի կրօնաւորք տեղւոյն վայելեսցեն, և ընդ թագաւոր Հաւրն իմում զիս ևս յիշատակեսցեն փրկարար սուրբ պատարագաւ, և զգերեզմանն իմ անփոյթ մի՛ արասցեն, զի մի՛ կորիցէ ժառանգութիւնն իմ:

Այսուհետև մի՛ ոք իշխեսցէ քակել զկտակն իմ, և յափշտակել ի Մաղերդայ վանից սուրբ Նախավկայէն զայս ագարակս՝ ոչ թագաւոր, ո՛ հայրապետ, ոչ եպիսկոպոս, ոչ առաջնորդ, ոչ իշխան, ոչ փոխթագաւոր և ոչ տանուտէր, որք վասն ագահութեան կամ վասն հարկապահանջութեան կամ վասն նախանձու, զի ընդ անիծիւք է:

Եւ որ յանդգնի, և քակտեսցէ զայս կտակս և նենգեսցէ զայս դաստակերտս զամենայն, կամ զմասնաւորն ծախելով կամ գրաւելով, Յ Ժ Ը հայրապետաց նզովքն ի վերայ այնպիսոյն եղիցի, թէ կարգաւորէ թէ աշխարհի, և զպատիժն Կայենի, Կորխայ և Դատանայ առցեն: Եւ ընդ խաչահանուացն և ընդ Յուդայի դատապարտեսցին. ամէն. եղիցի եղիցի:

Իսկ ընդունողքն և լոգքն օրհնեալք լինին յԱստուծոյ և սուրբ Նախավկայէն, ամէն: Եւ այս յիշատակս անջինջ մնասցէ ի դուռն Մաղարդայ վանից սուրբ Նախավկային մինչև գալուստն Քրիստոսի:

Աւարտումն եղև կտակագրիս հրամանաւ մեծի թագաւորազնոյն Զախարիէի՝ թելադրութեամբ Տեառն Բարգէնայ արհեպիսկոպոսի, և վկայութեամբ մեծի իշխանացն Հայոց՝ Վասակայ իշխանին Վայրաց որդւոյն Ելլ-Զամիրայ, Գէորգայ իշխանին Գնունեաց, Շահապայ իշխանին Արծրունեաց, Համազասպայ իշխանին Ամատունեաց, Խոսրովու իշխանին Գողթնեաց, և Աշոտայ կուսակրօնակրաւնաւորի: Որ հրամանաւ մեծի ափկնոջըն թագաւորազնուն, կուսութեամբ կեցեալ Զախարիէի, և Տեառն Բարգէնայ մեծանուն և մեծազգի արհի եպիսկոպոսի, և փառաւոր Աստուածասէր իշխանացս և զօրաց՝ նոցին վկայութեամբն արձանացուցեալ զայս անջնջելի կտակագիրս գրեցի ի փառս Քրիստոսի և ամենայն սրբոց նորա:

Եղև ի թուին Փրկչին Թ. Ճ՛ և ՀԵ ամին, և ի մերս հայկազեան տումարին Գ. Ճ՛ Լ ամին և Ահեկանի ամսոյն Ժ. Զ ին:

Արդ և ես Զախարիէս այսու օրինակաւ թուղթ մի գրել ետու, և առաքեցի առ արքայ հայրն իմ, զի արձանագրեսցէ ի վերայ վիմի միոջ, և կանգնեսցէ զվէմն ի գլուխ զանգակատան վանից մերոց սուրբ

Յովհաննէսին. զի թէ առ յապայ թուղթքըն եղծանիցին ի հրոյ կամ ի ջրոյ, սակայն քարիւ արձանն անջինջ մնացէ յաւիտեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱՃԱՒԻԳ
ՕԴԵՐԵՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՐՁ
ԳԻՏԵԼԻՕՔ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ.

(Շարունակութիւն)

ԳԼՈՒԽ Բ.

Օդերեւոյթք ջերմէն.

7. Մէգ.

7. — Առաւօտները եղած ժամանակնիս դեռ արեգակը չելած, երբեմն կտեսնենք, որ բոլոր մեր ստորին օդոյ գաւառը թանձր մշուշ (դուման) մի պատեր է, որն որ բնաւ չեմք կրնար տեսնել մեր դիմացի եղած առարկաները բացի մէկ ոտք՝ երբեմն ալ մէկ կանգունէն զատ. այս երեւոյթին կըսուի մէգ, մշուշ, բուք կամ մառախուղ։ Այս մէգը արեգակը հորիզոնէն վեր բարձրանալուն պէս՝ կսկսի ցրուիլ ու անյայտ լինել. բայց երբեմն ալ թանձր լինելուն՝ արեգակը ելնելէն ետքըն ևս քիչ մի ժամանակ կմնայ ու յետոյ անձրեւի պէս վար կթափի։ Այս ընդհանրապէս մէգը առաւօտեան դէմ սաստիկ կլինի, մթութիւն մի կպատճառէ, շատ ժամանակ երեկոյեան ատեն ալ մառախուղ կլինի, նաև մեծ քաղաքներու մէջ ալ աւելի մեծ ու սաստիկ։ Երկրիս ամեն կողմը մառախուղ չլինիր. հիւսիսային կողմերը մէգը այնպէս թանձր կլինի, որ բոլոր տարին շարունակ այնպէս կմնայ, որն որ մեծամեծ փնասներու ու դժբաղդութեանց պատճառ կլինի այն տեղերը երկայն ատեն որսորդութեան համար եկող նաւերուն։ Ցած դիրք ունեցող ու խոնաւ տեղերը, ճախինները, գետերը ևն. շատ աւելի մէգի կամ մշուշի մէջ կգտնուին քան թէ բարձր դիրք ունեցող և չոր տեղերը. որովհետև առաջինները իրենց բնութեամբը շատ առատ ջրաշոգիներ կը հանեն։ Այս բանէս կհետևի որ մէգը կկազմուի՝ երբ որ շատ ջրաշոգիներ օդոյն մէջ բարձրանան, և այս ջրաշոգիները խառնալով համատարած օդը կլեցնեն ու անոր թափանցիկութիւնը կյափշտակեն։ Այն ժամանակ աւելի կլինի մառախուղ՝ երբ խոնաւ գետինը օդէն աւելի տաք կլինի, որով բարձրացած գոլորշիները կը խառնան և տեսանելի կլինին։ Բայց պէտք է որ օդը յագեալ լինի, որպէս զի կարողանայ գոլորշին խառնալ։ Կրնայ նաև մառախուղ պատահիլ՝ երբ որ ջերմ ու խոնաւ օդոյ հոսանք մի անցնի գետին վերայէն, որուն ջերմութեան աստիճանը նուազ լինի օդէն. քանզի այն ժամանակ օդը ցրտանալով՝ կյագենայ, որով և կխտանայ անոր միջի գոլորշին։ Մառախուղ չի լինիր երբ օդը չոր ու տաք լինի. քանզի այն ժամանակ օդը կծծէ զշոգին՝ ձևացածին պէս, և զայն լուծեալ կպահէ անտեսանելի վիճակի մէջ՝ մինչքան որ ցուրտ օդոյ հոսանք մի խտացնէ զանիկայ բաւական բարձրութեամբ և ամպի երևոյթ մը տայ։ Մառախուղը ըսինք վերջը անձրեւի պէս երկրիս վերայ կթափի, սորա պատճառը այն է որ ցուրտ ու չոր հողմը կխտացնէ շոգոյն փոքրիկ գնտակները, շատ մը պզտի անձրեւի կաթիլ դարձնելով երկրիս վերայ կիջնեն։

8. Ամպ.

8. — Ամպ կըսուի գոլորշոյ մեծամեծ կոյտերը մէգի պէս խտացած պղպջակի կերպարանքով, և անով միայն կզանազանի մէգէն, որ կլինայ մթնոլորտի վերին գաւառներուն մէջ, և յառաջ կուգայ միշտ երկրիս երեսէն բարձրացած գոլորշոյն խտացմանէն. զոր օրինակ, ծովու ջուրերը, մշակած երկիրը և ամեն խոնաւ մարմինք կպատճառեն շոգիացումն. ուսկից շարունակ կգտնուի օդոյ մէջ ցրուած ջրոյ մեծ քանակութիւն մը ջրեղէն վիճակի մէջ. ջուրն այս վիճակիս մէջ

տեսանելի չէ, և եթէ չլինէին խոնաւաչափք կամ որ և իցէ ուրիշ հնարք մը, միայն մեր աչքով չէինք կրնար իմանալ անոր ներկայութիւնը՝ մթնոլորտին մէջ, բայց երբ որ և իցէ պատճառ մը ցածուցանէ օդոյ բարեխառնութիւնը, անիկա ալ չի կրնար պարունակել ջրային շոգւոյ նոյն քանակութիւնը. աւելցածն կխտանայ՝ շատ մը պզտիկ գնտակներու կամ փամփուշտներու ձևով, որոնք վար չեն ընկնիր՝ քանզի վեր կբռնուին՝ մէկ մը այն ջրային շոգիէն՝ զոր իրենց մէջ ունին, և որ օդէն աւելի թեթև է, մէկ մ՚ալ՝ որովհետև վարի կարգերու տաք օդն վերենք վեր կմղէ։ Այս վիճակիս մէջ ջրային շոգին տեսանելի կլինի և կկազմէ օդոյ մէջ այն կոյտերը, զոր ամպ կանուանեմք։ Նաև եթէ երկու տարբեր բարեխառնութեամբ խոնաւ օդոյ կոյտք իրարու միանան՝ կրնան ամպ մը ձևացնել հետևեալ օրինօք. — Եթէ օդոյ մի կոյտը երկու աստիճան բարեխառնութեամբ՝ կրնայ պարունակել գրեթէ 6 մասն անտեսանելի շոգւոյ, ենթադրենք, որ այս երկու կոյտք իրարու խառնուին, հարկ է որ մէկ կոյտ մը լինի և ունենայ 5 աստիճանի բարեխառնութիւն և իրեն մէջ գտնուի 15 մասն շոգւոյ. 5 աստիճանով օդն չի կրնար բովանդակել ջրոյ $7^1/_2$ մասէն աւելի օդաձև վիճակի մէջ. ասով աւելցածներն՝ այսինքն՝ 8 մասն շոգւոյ՝ պիտի խտանան և ամպ դառնան։ Հողմերը մեծ ազդեցութիւն ունին ամպերուն վրայ, — Նախ՝ եթէ ցուրտ օդոյ հոսանք մը յանկարծակի փչէ երկրի մը վրայ, անոր մթնոլորտին անտեսանելի շոգին կխտացնէ, և մառախուղի կփոխարկէ։ — Երկրորդ՝ եթէ շատ մը խոնաւ ու տաք հով մը հանդիպի ցուրտի մը, նոյնպէս մառախուղ կամ ամպ կպատճառի. — Երրորդ՝ եթէ ընդհակառակն չոր և տաք օդոյ հոսանք մը անցնի ամպոց մակերևութին վրայէն՝ կցրուէ զանոնք, իրեն քաշելով անոնց շոգին, և անտեսանելի ընելով։ Ամպերը չորս տեսակ կը բաժնուին ըստ կերպարանացն, զոր առնուն և են Գիռռուս, Կումուլուս, Ստրատուս, և Նիմբուս։ Ասոնցմէ շատ ուրիշ երկրորդական բաժանմունքներ ալ կան, ինչպէս գիռռուս — կումուլուս, գիռռուս — ստրատուս ևլն։ Այս օդաղետը ամպերը ընդհանրապէս երեք մթնոլորտական գաւառներու կբաժնէ, այսինքն՝ վերին, միջին և ստորին։

Գիռռուս ըսուածները տեսակ մը ամպեր են, որոնք մթնոլորտին մէջ ամեն կողմ կտարածեն ու կոհակաձև ծռելով թել թել կբաժնուին ու մազի պէս կկախուին ու միշտ օդոյն վերի գաւառին մէջ կկենան, որոնք երբեմն երկայն ժամանակ, և երբեմն ալ շատ քիչ ատեն կտևեն, ու կցրուին աներևոյթ կլինին. քանի որ օդը երկար ժամանակ ջինջ ու յստակ ու անամպ մնացած է, նախ և յառաջ այս գանգուր ըսուած ամպերը կելլեն ու կսկսին երկնային շափիւղայ կամարը պղտորել, ու զանազան տեսակ ձևերով ծառի ճիւղերու պէս թել թել կախուած կմնան, ու երբեմն ալ իրարու քով խիտ կարգով միացած, այս ամպի օդոյն մէջ ո՛չ շատ ժամանակ մնալը անյայտ է. երբեմն մէկ բոպէ մնալէն ետքը յանկարծ կցրուի ու անյայտ կլինի. երբեմն ալ ժամերով կմնայ. թէ որ տեղ տեղ կեցած երևնալու լինի՝ երկայն ժամանակ կմնայ, ու եթէ ուրիշ ամպերու մօտերը կազմուելու լինի՝ խիստ կարճ կտևէ. վերջապէս լաւ օդոյ առաջին նշան կլինի՝ եթէ տեսնուելու լինի։

Կումուլուս ամպը տեսակ մը թանձր ու խտացեալ գոլորշիներէ ձևացած ամպերուն կասուի. այս կուտակները աւելի խիտ բնութիւն ունին, որոնք մթնոլորտին միջին գաւառին մէջ կկենան, ու ընդհանրապէս հողմոց միջնորդութեամբը ամեն կողմ կշարժին. պարզ եղանակի ժամանակ այս ամպը կանոնաւոր կերպով կելլէ ու կոչնչանայ. սաստիկ հովի ատեն հովին փչած կողմերը երկինքին վրայ աճագին կուտակի ամպեր կելլեն. երբեմն աներևոյթ լինելու փոխանակ աւելի ևս կշատանան ու կընդարձակին. երբեմն ալ գանգուր ու սփիւռ ըսուած ամպի կփոխուի, որն որ օդը մաքուր եղած ատենները փոքրիկ ու անկանոն ձևով մը կսկսի երևնալ ու երթալով քիչ քիչ մեծնալ ու քովի գտնուածներուն հետ միանալով կընդարձակի ու երիկուան դէմ ցրուելով՝ օդը յստակ կմնայ. Եւ եթէ ընդհակառակն երեկոյեան դէմ աւելի բազմանան, մանաւանդ թէ պատեն սպիտակ ամպով, այն ժամանակ պէտք է սպասել անձրևի և մրրկի. Հասա-

բակօրէն պայծառ օրերը առաւօտեան կգոյանայ ու մինչեւ կէս օրը աճելով կընդարձակի՝ ու արեւը մանելէն ետքը աներեւոյթ կլնի։

Սփիւռ ամպ կըսուի այն ամպը, որ հաստատակօրէն շերտերէ կամ գօտիներէ կկազմուին, որոնք օդոյն վերի գաւառը չեն կրնար թանձրանալ, ու միշտ գետնի վրայ կամ լեռներուն ըստորոտը մէգի նման կկենան։ Ամառուան հանդարտ իրիկունները կտեսնուի որ՝ սփիւռը դաշտերուն վրայէն քիչ մը բարձր տեղեր կվերանան ու կծածկեն զանոնք։ Կէս գիշերը և կամ կէս գիշերին ու առաւօտեան մէջի ժամանակուան միջոցը՝ իր վերջին աստիճանի խտութեան կհասնի, և արեւն ծագելուն պէս՝ տաքութիւնը քիչ քիչ բարձրանալով՝ կկորսուի, աներեւոյթ կլնի։ Բայց երբեմն կպատահի՝ որ հանդարտ կմնայ կարգ կարգ կխտանայ, այնպէս որ օդը անոր ծանրութիւնը չի կրնար տանել, այն ատեն սեւ ու մթագին անձրեւաբերի յատկութիւն կստանայ, ու անձրեւի պէս վար կթափի։

Անձրեւաբեր ամպերն են անձրեւ բերող ամպեր, և չունին մասնաւոր ձեւ մը, միայն թուխ, գունով կորոշուին, որոնց ծայրերը բոցագոյն երիզով պատած են։

Երբեմն կպատահի՝ որ մթնոլորտին վերերը գտնուած գանգուր ամպերը՝ օդոյն միջի գաւառը եղած կուտակ ամպերուն հետ կխառնուին, ու տեսակ մը ամպ կկազմեն, որոնք կկոչուին գանգուր-կուտակ ամպեր. այս տեսակ ամպերը օդոյն մէջ ամեն ժամանակ չեն երեւնար, ընդհանրապէս ամառուան եղանակին մէջ կպատահին, որոնք որ մշտնջենաւոր ու հաստատուն օդերու առաջին աւետիսը կլնին՝ երբոր կսկսին տեսնուիլ. ամառ գիշերները իրենց ձեւը աւելի որոշ կերեւնայ. դիւքը կլոր ձեւով փոքրիկ սպիտակ ամպերէ ձեւացած են, որոնցմով երկինքը նիշ նիշ կերեւցնէ. այս տեսակ ամպերը երբոր շարունակ երկայն ժամանակ խոնաւ օդեր լինելէն ետքը երեւնան՝ որն որ լաւ ու պարզ եղանակներու գուշակ է, երբեմն ալ պարզ ու լաւ եղանակներէն ետքը կերեւնան, որն որ խոնաւ ու անձրեւային օդերու նշան է։

Երբեմն Գանգուր ամպը Սփիւռ ըսուած ամպին հետ խառնուելով տեսակ մը ամպ կկազմեն, որոնք առանց թանձրութիւն ունենալու միշտ ձեւերնին կփոխեն անհամեմատ կերպով, ու երկայն շերտերու նման թել թել ասդին անդին կտարածեն. ասոնց ալ կըսուի գանգուր-սփիւռ ամպ։ Այս ամպերը երբ առաւօտեան լուսէն լուսաւորուին, այն ժամանակ թել թել երկայն հրակերպ շերտերու պէս կերեւնան։ Այս ամպերըն են որ արեգակը մայրը մտնելու ատեն՝ արեւմտեան կողմերը և անոր մօտերը գտնուելով՝ «Քէրջուլյա» (այս երեւոյթը իր տեղը կպարզենք) ըսուած սքանչելի երեւոյթը յառաջ կբերեն։ կազմուածքնին թանձր ու երբեմն բարակ կլնին։

Ամպոց գոյնը։

Ամպերը գորշագոյն ճերմակ կլնին՝ երբ որ արեգակն հորիզոնին վրայ լինի. կարմիր՝ նարընջագոյն կամ դեղին կլնին՝ արշալուսոյ և վերջալուսոյ ժամանակ։ Նոյնպէս արեւն ու լուսինը եթէ խիտ ջրային միջոցի մը մէջէն տեսնուին՝ կաս կարմիր կերեւնան։ Աւելորդապաշտ մարդիկ այս երեւոյթը սովորաբար բնութենէ դուրս (գերբնական) պատճառէ մը յառաջ եկած կկարծեն, բայց իրօք ասոնք ամենն ալ արեգական ճառագայթներուն բեկբեկելէն յառաջ կուգան։ Վասն զի երբոր արեգական ճերմակ լոյսը կամ ճառագայթները գոլորշիկի մանր գնտակներուն մէջէն անցնելու լինին, լուսաւոր, գոյնզգոյն, շողշողուն ճառագայթներու կբաժնուին, ու այնպէս մարդուն աչքին կուգան, ինչպէս ապակի հատուածակողի մը վրայ ալ կամ եկեղեցիներու մէջ կախուած ապակեայ ջահերու վրայ շատ անգամ կտեսնուի (ճերմակ լոյսը, որ եօթը գունաւոր ճառագայթներէ կազմուած է, կխօսինք ծիածանի վրայ)։ Երկնքին կապոյտ գոյնն ամպերէն չէ, այլ մթնոլորտին օդէն, որ չափաւոր քանակով մը տեսնուած՝ կապոյտ գոյնի կզարնէ, և որչափ քանակը ընդարձակուի՝ այնքան գոյնն ալ աւելի թանձր կապոյտ կերեւի։ Ասոր համար է որ ամպերն ալ հեռուէն դիտելով՝ կկորսնցնեն իրենց բնական գոյնը և կապոյտ կերեւան։

Հեռաւորութեան ամպոց։

Թեթեւ ամպ մը կրնայ երկրիս ամէն բարձր լեռներէն աւելի ալ բարձր ելլել, բայց ծանր ու թանձր ամպք շատ անգամ կդիպչին աշտարակաց եւ ծառոց գագաթան, եւ ինչուան երկրիս մակերեւոյթին ալ կիջնուին։ Այն ամպերն որ սփռուած մազերու ձեւ ունին՝ շատ անգամ երկրէս հեռու կլլնին չորս՝ եւ նաեւ ութ հազարամեթր։ Այն ամպերը երկրիս աւելի մօտ կլլնին՝ որոնք որ աւելի լի են ելեկտրութեամբ։ Այն ամպերը, որոնցմէ կայծակ կցաթքէ երկրիս վերայ՝ անկէ 600 մեթրէն աւելի հեռու չեն լլնիր եւ շատ անգամ անոր կդիպչին իրենց ամենէն ցած ծայրովը։ Ներքապէս ամպոց բարձրութիւնը զանազան է. միջին համեմատութեամբ է 1200 եւ մինչեւ 1400 մեթր ձմերուան մէջ, եւ 3000 եւ մինչեւ 4000 ամառուայ մէջ. բայց շատ անգամ անկէ աւելի բարձր կլլնին։ Ամպոց մթնոլորտին մէջ առ ի կախ մնալուն պատճառը մեկնելու համար, կնմանցունեմք իրենց բշտիկները փոքրիկ օդապարիկ գունտերու, որ լեցուած լլնին շրջապիւռ օդէն աւելի թեթեւ եւ ջերմ օդով։ Ամպոց մեծութիւնն ալ տարբեր են. կան ամպեր, որոնց մակերեւոյթը 30 քառակուսի հազարամեթրէն ալ աւելի կլլնի, եւ հազար մեթրէն ալ աւելի թանձրութիւն կունենան. ընդհակառակն կան ամպեր ալ՝ որ միայն քանի մը մեթր մակերեւոյթ ունին։ Ամպոց այսչափ տարբեր ձեւեր ունենալուն պատճառներն են, նախ իրենց ծագման յատուկ պատճառն, երկրորդ՝ իրենց ելեկտրական վիճակն, երրորդ՝ վերաբերութիւնը օդոյ հոսանքներու հետ, չորրորդ՝ երկրիս երեսէն ունեցած բարձրութիւննին։

(Շարունակելի)

Ծ. Գ. ՄԿՐՏԻՉ Ս. ԳԱՅԹԱՃԵԱՆՑ.

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Ժառանգականութիւնը բացատրելու համար հարկաւոր է առաւելապէս ուշ դարձնել նմին թէ՝ որդիները որդեծ՛ք ստանում են մանր փոփոխութիւնները եւ աննշան յատկութիւնքը ծնողներից. ուրոյնհետեւ զանազան փորձերից յայտնի է, որ գլխաւոր յատկութիւնները միշտ ընտանում են որդիքը։ Որովհետեւ այս խնդրոյ բացատրութեան համար եղած փորձերը մարդու վերայ են եղած, վասն որոյ մեք այստեղ պէտք է ցոյց տանք ժառանգականութիւն մարդոց մէջ եւ նորա համեմատ եզրակացնել եւ միւս կենդանիներին։

Արտաքին դծագրութեանց յատկութիւնները սկսած բոլոր մարմնից մինչեւ նորա զանազան մասները, եղունգների ձեւը եւ մազերի գոյնը շատ անգամ փոխանցւում են որդիներին ծնողներից։ Բայց այս փոխանցական յատկութիւններից ոչ մէկը այնպէս նկատելի չէ եւ ակներեւ՝ ինչպէս դէմքի արտայայտութիւնը եւ նորա յատկական գծագրութիւնները։ Գծագրութեան ուղղանկերպութիւնը կամ անկանոնութիւնը, զոր օրինակ՝ գեղեցկութիւնը, անձոռնիութիւնը լինում են ժառանգական։ Այս երեւոյթին ապացոյց մեք գտնում ենք հին հեղինակների մօտ. դորա վկայութիւններ շատ ունինք թէ մեր առօրեայ հետազօտութիւններում եւ թէ գիտութեան քննած եւ դրած փաստերում։ Հին ժամանակներում Սպարտէ կդզում մինչեւ անգամ կար մի օրէնք ամուսնացնել այն մարդիկներին, որոնք գերազանցում էին գեղեցկութեամբ, որ

բազմացնեն և հաստատեն գեղեցկութիւնը ժողովրդեան մէջ: Որդիների նմանութիւնը ծնողներին այնքան մեծ է լինում երբեմն՝ որ իսկոյն իմացւում է այդ միասնութիւնը նրանց մէջ: Երևելի երգիչ Նուրրին մի որդի ունէր՝ այնքան նման ինքեան, որ շատ անգամ շփոթում էին նրանց բեմ դուրս եկած ժամանակ: Շատ անգամ պատահում է՝ որ այս ժառանգական նմանութիւնը երևում է երեխայի մէջ ոչ իսկզբանէ, այլ մի որոշ հասակում և պատահում է, որ կրկին անհետանում է: Երբեմն որդին չափազանց նման է լինում մանկութեան ժամանակ մօրը. իսկ յետոյ նրա երեսի գծագրութիւնքը փոփոխվում են և այս նմանութիւնը շատ ու քիչ պակսում է: Ժիրու տե Բիւզարէյնը օրինակ է բերում մի ընտանիք, ուր մանկութեան ժամանակ տղայքը շատ նման էին մօրը, իսկ աղջկունքն՝ հօրը: Իսկ երբ մեծացան նրանք, նմանութիւնը դարձաւ բոլորովին հակառակ, այս ինքն, տղայքը աւելի նմանեցան հօրը, իսկ աղջկունքը՝ մօրը: Երբեմն ժառանգական նմանութիւնը արտայայտւում է ոչ թէ մարմնոյ ընդհանուր գծագրութեան մէջ, այլ մի որ և լցէ ընտանեպական ձևի մէջ, մարմնոյ որ և լցէ մասնի վերայ, զորօրինակ՝ ճակատի, աչքերի, քթի, շրթունքների վերայ ևլն:

Եւ սորանում նմանապէս արդէն հին հեղինակները նկատել են այս փաստը: Պլուտարքոսը պատմում է որ Թէբէս քաղաքում կար մի ընտանիք, որոյ անդամները ծննդեան օրից ունէին մարմնոյ վերայ մի նիզակաձև արատ: Այս իսկ յատկութիւնը երևեցաւ յետին ժամանակներում Իտալիայում բնակւող մի Լանսադ անունով ընտանիքի մէջ: Մի ընտանիք կար Բոնաիվօլլիօ անունով, ուր հօրից որդուն փոխւում էր մի փոքրիկ բնական ուռոյց, որ խոնաւ քամիի ժամանակ ուռչում էր՝ որով և նախագուշակութիւն էին անում քամիի վերայ:

Հռովմայեցիք նկատելով մի քանի ընտանիքներում այդպիսի ժառանգական յատկութիւնները, տալիս էին նրանց զանազան կոչումներ նշաններին համաձայն: Այստեղից յառաջացել են ընտանիքների կոչումները կապիտոնէս (capitones), լաբէոնէս (labeones), նազոնէս (nasones), բուկկոնէս (buccones) ևլն:

Բուրպօնեան ընտանիքը որոշւում էին արծուաձև քթով: Պօրթալը պատմում է մի ընտանիք, որոյ քթի և շրթունքների մկանունքները շատ դիւրաշարժ էին և խօսակցութեան ժամանակ քթի ծայրը բարձր ու ցածր էր տատանւում: Պէվէզեն պարոնների որդիքը ուսերի մէջ ունէին մի բիծ, և այս նշանով մէկ անգամ նրանք գտան իւրեանց կորցրած ժառանգը արհեստագործութեան պաշտօնի մէջ:

Այս ըստ երևութին աննշան յատկական պարբերութիւնները շատ անգամ չեն դադարում մնալու մի ընտանիքի մէջ՝ երբեմն մինչև երկու դար: Այն՝ թէ հասակը ժառանգաբար փոխանցւում է, սա յայտնի է ամենին և արդէն Հիպոկրատէսը ասած է թէ՝ թզուկներից հսկաներ չեն ծնվում, իսկ հսկաներից՝ — թզուկներ: Եթէ ընտանի կենդանիների մէջ (տաւար) ընտրուին ամենամեծ հասակաւորները, կարելի է ստանալ մեծ հասակով կենդանիք. այս փորձը արուած է նաև

մարդոց վերայ։ Մի քանի ազգերի մէջ օրէնք կար մեծահասակ տղամարդոց պսակել մեծահասակ կանանց հետ, որ յետնորդները լինէին աւելի հաստատուն և աւելի պիտանի պատերազմի համար։ Յայտնի է որ Մեծն Ֆրեդերիկոսի հայրը (Գերմանիայի Թագաւոր) սաստիկ սէր ունէր դէպ ի հսկաները, և իւր զօրականներին հրամայում էր պսակուիլ մեծ հասակով կանանց հետ։ Նոյնպէս լինում է ժառանգականութիւն՝ գլխի, վզի և մարմնոյ զանազան մասերի մեծ կամ փոքրութեամբ։

Անգղիայի անասնապահները այս հիման վերայ զանազան տեսակ կենդանիներից ստացան որոշեալ սեռեր։ Սորա համար նրանք նախ և յառաջ ժողովեցին այն նըշանաւորները, որ կամենում էին ունենալ՝ և յետոյ ընտրեցին թէ արու և թէ էգ այն անհատներին՝ որոնք ունէին այս նպատակը լրացնող նշանները։ Տօքթէօր Գէնէսին պարապում էր նոյնապիսի փորձերով ճագարների վերայ։ Տասը տարի նա խառնում էր այնպիսի կենդանիներ միմեանց հետ՝ որոնք ունէին մի որ և իցէ երևելի յատկութիւններ, և սորա հետևանքը այն եղաւ, որ ստացաւ մի մեծ խումբ ճագարներ, որ մարմնի զանազան կողմերում ունէին զանազան շատ ձևեր։

Այնպիսի փորձեր եղած են ցանկացած հետևանքներով աղաւնիների և մկների վերայ։ Մորթու գոյնն էլ նմանապէս փոխանցվում է ժառանգաբար. վասն որոյ խառնելով զանազան գոյն ունեցող փետուրներով աղաւնիներ՝ կարելի է ստանալ ձագեր՝ որոնց փետուրները կներկայացնեն մի գեղեցիկ գոյնզգոյն խառնուրդ։ Եթէ սպիտակ սիրամարգները խառնուէին հասարակ սիրամարգների հետ՝ ձագերը կլինէին գոյնզգոյն։

Այսու ամենայնիւ պատահում է շատ անգամ՝ որ՝ ժառանգները ունենում են ոչ թէ ծնողների երկուսի գոյների խառնուրդը, այլ ծնողների միայն մէկի գոյնը կատարելապէս։ Մի խափշիկ տղամարդից և սպիտակ կնոջից Բերլինում ծնուեցան 4 որդիք բոլորովին սպիտակ, իսկ 7 աղջիկ թուխ։ Եղած են պատահմունքներ, որ այդպիսի ծնողներից ծնուել են երկուորեակներ, որոնցից մէկը բոլորովին սպիտակ է եղել, իսկ միւսը բոլորովին սև գոյնով։ Շատ անգամ ընտանիքներում ժառանգականաբար փոխանցւում է մազերի և աչքերի գոյնը և ձևը։

Ոչ միայն արտաքին առանձնութիւնները, այլ նոյնպէս և ներքին գործարանաց կազմակերպութիւնը փոխանցւում է սերնդին։ Որ օրինակ, ոսկրային համակարգութեան շատ կամ փոքր զարգացումը։ Գրաստապանները ընտրելով այնպիսի անհատներ՝ որ չունէին ոսկրային համակարգութեան լաւ զարգացումն՝ ըստանում են մի և նոյն յատկութիւններ ունեցող սերունդ։ Յետազօտած են այնպիսի ընտանիքներ՝ որոնց անդամները մի աննշան և թեթև ծակելուց կամ կտրուածից ունեցած են սաստիկ արիւնահոսութիւն, և հետևանքը եղել է մահ։ Կան խիստ շատ ընտանիքներ, որոց ոմանց անդամները (արիւնայինն) արիւնով լիքն են, իսկ այլոցն՝ նիհար կազմակերպութեամբ և այլն։

Երբեմն ժառանգաբար փոխանցւում է մի այսպիսի յատկութիւն, որ ընտանիքի

անդամները շատ դանդաղ են մեծանում մինչև մի որոշեալ հասակ, որից յետոյ յանկարծ սկսում են զարգանալ. այսպիսի փոխարկութեանը շատ անգամ մասնակցում են հիւանդութիւններ և տկարութիւններ։ Վիճակագրական ցուցակներից՝ որոնք ցոյց են տալի զանազան ազգերի կեանքի շարունակութիւնը, կարելի է նկատել, որ մի քանի ընտանիք ունին աւելի երկար կեանք։ Հարիւր տարեկան մարդոց ընտանիքը շատ պատահմունքներում ցոյց է տուել, որ բարեկամները նոյնպէս եղած են երկարակեաց։

Այս փաստերից, որ կարելի էր յառաջ բերել անթիւ քանակութեամբ, մեք տեսանում ենք, որ ժառանգականութեամբ ծնողներից փոխանցւում են սերնդին շատ անգամ այնպիսի յատկութիւններ, որոնք կարծես անհարազատ (օտար) են, և որոնք երևցած են ընտանիքի առաջին անդամի մօտ համարեա պատահաբար, զոր օրինակ քթի ձևը, մարմնոյ վերայ բիծ՝ ևլն։ Բայց՝ բաց ի սորանից՝ այս փաստերը ցոյց են տալիս և մի ուրիշ երևելի հանգամանք, որ ժառանգականութեամբ փոխանցւում են շատ երկայն ժամանակում և շատ սերունդների փոխուելով այնպիսի յատկութիւններ, որոնք գըտնըւում են ծնողներից միայն մէկի մօտ։ Առաւելի կարևոր է նորա համար՝ որ առհասարակ ընդունւում են թէ՝ յատկութիւնների ժառանգականութիւնը մշտական է լինում այն ժամանակ՝ երբ երկու ծնողքն էլ ունին մի և նոյն զարգացումը մի յատկութեան մէջ, զոր օրինակ՝ երբ կամենում են խառնել հօտից (սեւրուից) վերառած կենդանիք, որ ունին մի որ և իցէ առանձին յատկութիւն։

Եւ ընդունելով զայս իբրև օրէնք՝ հաստատում են, որ այն արհեստական փորձերը, որ անում են ընտանի կենդանիների վերայ՝ նրանց խառնելով զանազան սերունդ ստանալու համար, չէ կարելի յարմարեցնել և վայրենի կենդանիներին, որոնք զուգւում են առանց ընտրութեան, ինչպէս հասնում է, ուստի և մի որ և իցէ յատկութիւն, որ երևցած է մէկի մօտ, չէ կարելի լինել մշտական սերնդի մէջ, որովհետև միւս ծնողի՝ (որ չունի այդ յատկութիւնը)՝ ազդեցութիւնից այդ պատահական յատկութիւնը կանհետանայ սերնդի մէջ։ Բայց փաստերը զայս չեն հաստատում։ Լանսադները և Բէնտինկօլլիօները (որոնց համար մի փոքր յառաջ խօսեցինք) պըսակուեցին և մարդու գնացին, չգտնելով և չնկատելով ամուսինների մէջ իւրեանց ընտանիքի սերնդական յատկութիւնը։ Բայց այս յատկութիւնը դեռ յամառութեամբ շարունակում էր երևիլ յետնորդների մէջ, չնայելով նրան՝ որ միշտ նոր արիւնի էր հանդիպում։ Այս նոր արիւնը հասարակական կարծիքով՝ պէտք է երկրորդ կամ երրորդ սերնդի մէջ ջնջէր բոլորովին ընտանեկան այս առանձնութիւնը, այնու ամենայնիւ դեռ շատ երկայն ժամանակ պիտի մնար անփոփոխ։

(Մ. յետոյ)

ԱՂ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌ
ԴԱՒԱԴԻՐՍ ՀԱՅՈՑ·

Զկայենին առցէք երեր
Որ բաժանէք միշտ զՀայեր:

Ո՜վ դուք անմիտ անգամբըր վատք՝
Իմ զլխակերք և օտարին խաղք,
Եթէ «կրկին փորձիչք անմիտ»՝
Զի՞նչ ապա ձեզ եղից անուն,
Որ զԱզգ և Կրօն ձեզ խաղալիկ
Արած՝ իբրև նմա պաշտպան,
Եւ իբր զբարին Ազգին խորհող,
Վիհ անյատակ դուք պատրաստէք:

Ամօ՜թ ամօ՜թ վատ ձեր ճակտին,
Որ միշտ սիրէք զբաժանումն·
Բաժնուեցէք դուք իմ մէջէն,
Որ նախատինք էք Հայ անուան:
Շատ ձեզ նման ապականիչք՝
Ո՜հ, բունելով մէջ պարտիզիս,
Հեղձուցին, ո՜հ, իմ պտուղներ,
Ի բաց գնացէք, չա՛ր որոմներ:

Երսուն միլիոն ընտիր Հայեր
Ձեզ նմաններն կերան անյագ,
Յաւիտենից անէծք նոցա՝
Որ բաժանեն միշտ ըզՀայեր:
Ապստամբներ են անպակաս
Եւ յանասնոցն ի տեսակըս,
Չեն ինչ զարմանք թէ յազգ մարդկան
Գոն ապստամբք լի՛ր երամից:

Սակայն անէծք և բիւր նզովք
Որոց տան ոյժ ապստամբին,
Որ գայլոց հետ ուտեն զոչխարն՝
Եւ ընդ հովուին գոչեն «ա՜խ վախ»:
Յանչափ փառացս զի՞նչ թողիք ինձ.
Թագ գաւազան և գահ շքեղ՝
Ձեր պղծ ոգին թաղեց յերկիր,
Էլ ի՞նչ կուզէք լինէն վատեր:

Թշուառ Որդւոցս մնաց սփոփանք
Արարատեան սուրբ Գահն միակ,
Զա՞յն ևս կամիք, ո՜հ, տապալել
Տապա՛ր մահուն ձեր վատ ոգւոյն:
Քանի ընտիր Սուրբ Հայրապետք
Կարդան անէծք նոյն բռնաւորաց,
Որ հեռացան Մայր Աթոռէն
Անհաւատից աջովն պիղծ:

Խորշեցուցին զՀայն ի հայոց՝
Այն վատ ձեռօք փառաց պերճք,
Բայց չեն նոքա այնչափ անարգ
Քան ըզպաշտպանս իւրեանց Հայ վատք:
Դարերն անցան ազատութեան,
Լոյս գիտութեան ծագեաց յաշխարհ,
Բայց լոյսն անուն քող երեսացդ
Եդեալ՝ դառնայք ի վիհն կոյս:

Նոր վասակեանց բացան տապանք,
Զազիր որդունք եռացին դուրս,
Կրծել կամին զՄայրն Աթոռ,
Վերջին սփոփանք թշուառ Հայոյն:
Ի բա՛ց ի բա՛ց, որդունք վատին,
Սուրբ Աթոռոյս երկինք երկիր
Միշտ պաշտպան են, վա՜յ ձեր ջանքին,
Միշտ անարգանքն է ձեր բաժին:

Միայն բանիւ լոկ՝ ազգասէր
Չեւանայք դուք՝ գործով ձեր վատք,
Այդպէս խաբէք ո՜հ զիմ հայեր,
Նենգող խարդախ չար աղուէսներ:
Արտաշիսի լալկան կանայք
Են զաւախօս ձեզ ո՛ ծպտեալք,
Սէր արծաթոյն կուտայ ձեզ լող
Միշտ անարծաթ ազգասէրներ:

Կան ձեզ ընկեր վատ ղանգակներ
Չար Կիրակոսք և Պետրոսներ,
Այն կարգընկեց ուրացողներ
Փառաց սիրով կուրացեալներ:
Ի ներքուստ՝ գայլ 'ւ օձ խորամանկ,
Բայց արտաքուստ՝ գառն և տատրակ,
Խաբէք գրգռէք միամիտներ՝
Զհօտն ամբողջ կերչացդ յանձնել:

Տայք իրաւունս նենգ Փառնակեայ
Զթագ խլել Միհրդատայ,
Մինչ ժամ դիպող բարեյաջող
Ձեզ դիպեսցի անտի խլել,
Ձեր չար ոգւով յինէն հեռեալք
Հայ անունով անպտուղ ոստերս
Պապադաւան և Նորաղանդք
Նոցա ընկեր և հայ հոռոմք.

Ձեզ ժողովուրդ են այն հայեր,
Ելէք մեջիցս նենգ Վասակներ,
Արարատեան իմ Մայր Աթոռ
Վերջին սփոփանք է խեղճ Հայոյն.
Յաշխարհ ցիր ցան չուառ Հայեր
Ճիւ մնացեալ Հայկայ յորդւոց՝
Ի Ռուսաստան ընդ Տաճկաստան
Հաղորդակից Բոյն են դրեր.

Դուք բնաւերք և տնաւերք
Խելացնորք՝ ոսկւոյ գերիք,
Դուք ոչ էք Հայ Հայկայ ոգւով,
Այլ դաւաղիր ապստամբներ.
Այո, Հայ էք լոկ անունով,
Նրտես իմոյ Սուրբ բանակին,
Ի բաց կորջիք, չիք ձեր բաժին,
Չիք ձեզ կրօն ոչ սէր Ազգին.

Թէ բաժանեալքն քաղաքական
Դժուար լինին ամոլակից,
Իցէ՞ հնար թէ կապ կրօնից
Իսպառ լուծցի կալ անբաժան.
Յայնժամ մեռած է Տաճկաստան
Թէ մերժէ նա զՌուսաց Հայերս.
Դաւ խարդաւանք Մայր Աթոռոյն
Հերիք նիւթէք անգութ վատեր.

Զորասցի Յիսուս՝ որ զայս որոմ
Ցանեաց իմ Սուրբ անդաստաներ,
Կուրասցի աչքն այն վատատես՝
Որ սպասէ զպտուղն քաղել.
Իջցէ իղձս այն նենգ անձին
Ուսն ոսկի Աստուածային,
Յանդուգնս երկրի կործանեսցէ
Որ տապալէ զեկեղեցին.

Օ՛ն զաւակունք Քաջին Հայկայ,
Եւ Սուրբ ծնունդք Սուրբ Եփրատայ,
Սուրբ միութեան Դրօշու ներքև
Օ՛ն միացէք, մերժել զվատեր.
Որ ի բարձանց ձեզ խրոխտայր,
Անարգ անկաւ յերկիր խոնարհ.
Իւր կեղծաւոր հառաչանքներ . . .
Ոչ ևս կարեն ոչ զզք խաբել.

Սակայն ցանած իւր որոմներ
Օ՛ն միացէք իբաց քաղել.
Ընդ ցանօղին իհուր այրել՝
Որ կեանք առնուն Հայոց արտեր.
Զի՞ք չի՞ք վատաց, չիք յաջողուած
Յերկնից գոչէ որ էնն Աստուած,
Սուրբ Մայր Աթոռն Արարատեան
Ի հեղեղաց կայ անսասան.

Քաջին Հայկայ նա է զաւակ,
Քրիստոսաւանդ Կրօնի հպատակ,
Որ զանձն զոհ տայ իւր Ազգին՝
Նորա Կրօնին, Մայր Աթոռին.
Կեցցէ՛ Աթոռն Արարատեան,
Մեռցի՛ն ոսոխք իւր յաւիտեան.
Կեցցե՛ն հլու Հայկայ Որդիք,
Մեռցի՛ն ըմբոստ իւր թշնամիք.

Կեցցե՛ն պաշտպանք Հայ Կրօնին,
Մեռցին նենգողք Հայոց Ազգին,
Կեցցեն Հայեր, մեռցին վատեր,
Որ կեանք առնուն քաջաց սրտեր.
Կեցցէ սուրբ սէր և միութիւն,
Կեցցէ՛ յաւէրժ Հայկայ լեզուն,
Կեցցէ ԳԷՈՐԳ մե՛ր Վեհափառ
Հայր Հայրենեաց Փառօք պայծառ.

Կեցցէ՛ Կրօն մեր լուսատու,
Կեցցէ՛ Աթոռն Արարատու.
Կեցցէ յաւէրժ Հայկայ ոգին,
Ոսոխն առցէ զԲելայն բաժին.

Յունիս.

Ս. Բ. Գ. Վանեցի.

ԱԶԳԱՅԻՆ

Ի ՏԵՍՉՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ·

Նորոգումն շինուածոյ Ճեմարանիս Սրբոյ Էջմիածնի աւարտեալ գոլով ըստ մեծի մասին ի սկզբան ամսեանն յունիսի անցելոյ, աշակերտք նորին 65 թուով, որք ի հերուն հետէ պատսպարեալք էին ի Ղազարապատ անուանեալ հիւրանոցի վանիցս, փոխադրեցան ի ճեմարան այսր ի 10 նորին ամսոյ, եւ հարցաքննեալք ըստ օրինի՝ բաշխեցան յիւրաքանչիւր դասարանս։

Ըստ այժմու նախագծի կանոնաց ճեմարանիս՝ վեցեակ առաջին դասարանք սորին (յորոց եղէւն եւեթ բացեալ են տակաւին) կազմեն զայն մասն՝ յորում բովանդակին ուսմունք եւ հրահանգք Դպրանոցականք, այս ինքն է՝ պահանջելիքն ի Ժառանգաւորաց Դպրոցաց կամ ի Դպրանոցաց, որք կոչին եւ Թեմական Դպրանոցք։ Իսկ երեք վերջինք բարձրագոյն ճեմարանական ուսմանց՝ որք բացցին հարկաւ ի դէպ ժամանակի, այս ինքն յորժամ բացցին եւ մնացեալ երեքին դասարանքն դպրանոցականք, կամ յորժամ գտանիցին աշակերտք հմուտք հրահանգացն պահանջելոց յուսումնաւարտ աշակերտաց վեցերորդ դասարանի Դպրանոցին ճեմարանիս։

Յայտ իսկ է հասարակաց՝ զի նպատակ ճեմարանիս Սրբոյ Էջմիածնի գոլով պատրաստել բարեկիրթ եւ քաջուսումն պաշտօնեայս Հայաստանեայցս Եկեղեցւոյ, եւ վարժապետս վկայեաւրս ի պէտս ուսումնարանաց ազգիս, հարկ ի վերայ կայր ապաքէն ընդունել յաշակերտութիւն սորին զայնոսիկ ի պատանեաց կամ յերիտասարդաց՝ որոց արդէն աւարտեալ իցէ գովութեամբ զընթացս ուսմանց իւրեանց ի Թեմական Դպրանոցս մեր. սակայն որովհետեւ Թեմական Դպրանոցք վեցեցուն վիճակաց Ռուսաստանեայցս Հայոց, որպէս եւ Միջակային դպրոցքն ազգայինք որ ի Տաճկաստան եւ յայլ աշխարհս, չեւ եւս ցուցանեն յառաջադէմ զարգացումն այնպիսի՝ որով մարթանայցեն մատակարարել ուսումնաւարտ աշակերտս քաջահմուտս գիտութեանցն եւ լեզուաց դասախօսելոց ի բարձրագոյն դասարանս նոցին, Տեսչութիւն ճեմարանիս հարկադրեալ է առ այժմ ընդունել յաշակերտութիւն սորին ոչ միայն զպատանիս՝ որք չիցեն աւարտեալ զուսումն իւրեանց ի Դպրանոցսն յայնոսիկ, այլ եւ զայնպիսիս՝ որք գայցեն ի Միջակային կամ ի Միջնակարգ անուանեալ Դպրոցաց։

Այժմ անհրաժեշտ հարկի պիտոյից անսալով Տեսչութիւն ճեմարանիս Սրբոյ Էջմիածնի, եւ տեսանելով զի օր քան զօր յաճախեն որք խնդրագիրն լինին մուտ գործել ի ճեմարան այսր, կարեւոր դատի յայտ առնել ամենեցուն, զի

Նախ, որովհետեւ շինուած նորակառոյց ճեմարանիս չտանի զարդիս աւելի քան զայժմու թիւ աշակերտաց, մինչեւ իրի վասն առաջիկայ ուսումնական տարւոյ, որոյ սկիզբն համարի 1 Սեպտեմբերի, չլինի ընդունելութիւն նորա-

մաւտ աշակերտաց. իսկ վասն առաջիկայ 1876 ամին վաղագոյն յայտարարութեամբ ծանուսցի ի վիճակս վիճակս թեւ եւ հանգամանք աշակերտացն՝ որք կարիցեն ընդունելի լինել ի մին ի դասարանաց ճեմարանիս։

Երկրորդ, որովհետեւ ըստ կարգադրութեան Վեհափառ Հայրապետին մերոյ՝ մերձ ընդ մերձ հրատարակեսցին նախագիծք ուսմանց ազգի ազգի վարժարանաց մերոց, Ծխականաց, Թեմականաց եւ Կնոնականաց, աշակերտք որ կամիցին մտանել յառաջին կամ յերկրորդ կամ յերրորդ դասարանս ճեմարանիս՝ պարտին քաջուսմունս լինել ի գիտութիւնս եւ ի լեզուս՝ որք ուսուցանին ի նոսա, որպէս զի ի գալըստեան իւրեանց այսր հարցաքննեալք՝ կարողասցին ընդունելի լինել ի մին յառաջնոց դասարանաց ճեմարանիս։

Երրորդ, որովհետեւ ամենայն աշակերտք ճեմարանիս ձրիավարժք են, ոչ պահանջի ի նոցանէ հատուցումն թոշակի՝ ոչ մեծ եւ ոչ փոքր. սակայն եթէ ոք յանկանայցէ ազգասիրաբար ունել ի ճեմարանի աստ որդեգիր կամ սան զոք իւրովք ծախիւք, պարտական է հատուցանել վասն նորա ամ ըստ ամէ ռուբլիս արծաթոյ երեք հարիւր։

Չորրորդ, ամենայն խնդրագիրք զընդունելութենէ աշակերտաց պարտին գալ յանուն Տեսչի ճեմարանիս. ընդ նմին եւ վկայագիրք ուսմանց եւ բարեվարուց աշակերտացն, որպէս եւ վկայագիրք ծննդեան եւ մկրտութեան, եւ պատուաստի ծաղկին։

Հինգերորդ, յառաջին դասարան ճեմարանիս մտանեն պատանիք՝ որոց չափ հասակին չիցէ պակաս քան չորեքտասան ամն. իսկ որք աւարտեալ իցեն զընթացս ուսման իւրեանց ի միում ուրեք ի միջնակարգ կամ ի Թեմական դպրանոցաց, եւ կամիցին մտանել ի չորրորդ կամ ի հինգերորդ դասարանս ճեմարանիս, չպարտին պակաս լինել հասակաւ քան զվեշտասանամենայս, եւ ոչ աւելի ունիցին քան զամս 18։

Վեցերորդ, ուսումն ի ճեմարանիս տեւէ յընթացս ողջոյն տարւոյ՝ բաց ի կիւրակէից եւ ի տօնից։

Եօթներորդ, աշակերտք երից դասարանացն առաջնոց՝ որք չցուցանիցեն յառաջադիմութիւն ինչ եթէ չդատիցին արժանիք ի բաց արձակելոյ՝ կարեն մնալ ի նոյն դասարանս այլ եւս տարի մի միայն. իսկ յայլս ի դասարանաց՝ ի սակաւ դէպս եւ եթ առնի թոյլտուութիւն այնպիսի, այս ինքն յորժամ պատճառ չզարգանալոյ աշակերտին լեալ իցէ երկարատեւ հիւանդութիւն, կամ այլ ինչ այնպիսի. ապա թէ ոչ՝ ի բաց արձակի։

Ութերորդ, մանրամասն Կանոնք եւ սահմանք ճեմարանիս հրատարակեսցին տպագրութեամբ ի դէպ ժամանակի ըստ անօրինելոյ Վեհափառ Կաթուղիկոսի։

Գ. Մ. ՅԱՆԱՍԱՐԵԱՆՑ Ի Ս. ԽԱՉ Վ.ԱՆՍ.

Նոր-Նախիջեւանէն. անցեալ Յունիսի 25 ամսաթուով՝ ստացեալ մի գրութենէն հետեւեալ պարբերութիւնը կը քա-

ղեմք և շնորհակալութեամբ կհրատարակեմք։

«Նորաւմն Գ. Մկրտիչ Սանասարեանց ի Ճանապարհի՝ Պետերբուրգ գնալու միջոցին՝ այցելութիւն արաւ տեղւոյս Վանուց՝ և Ժառանգաւորաց դպրոցի աշակերտաց յառաջադիմութեան և որւած պատասխանիներին ուրախակից լինելով՝ և խրախուսելոյ մօք ընծայեց ի պէտս ձրիավարժ աշակերտաց չորս հարիւր ռուբլի, և խոստացաւ հարկաւոր դասական պիտոյք և գործիքներ ուղարկել ի Պետերբուրգայ, միանգամայն առաջարկեց հարկաւորութիւնքը հաղորդել իւրեան»։

«Հետը բերած էր նա և երկու ուսումնական մարդիկ»։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Զայնագրեալ Շարականի տպագրութիւնը աւարտեցաւ, և կարևոր եղած եկեղեցեաց և անձանց փութով հասուցանելոյ համար հարկ եղաւ կանխաւ ներկայ ծանուցումը հրատարակելով պատուիրել ձայնագրութեան դասատուաց, զի փութով ցուցակ կազմեն որ եկեղեցւոյ մէջ որ այժմ անհրաժեշտ կարևոր է ձայնագրեալ շարականը՝ և ձայնագրութիւն ուսանողներէն ոյք որ առանձինն (յատկապէս) ի սեպհականութիւն անձանցն կամին գնել, և այն ցուցակը հանդերձ յայտարարութեամբ ներկայացնեն յանուն Սինոդի Սրբոյ Էջմիածնի՝ պատճէնները ևս յանուն Տպարանական Ժողովոյ կամ Խմբագրութեան Արարատայ, յղելով որպէս զի ըստ այնմ արժանաւոր և ստիպողական տնօրէնութիւնը կատարուի։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՅՐԵՑԵԱԼ ՄԱՍԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ.

ԵԱՍՏՐԱԽԱՆ.

	Ռ.
Մկրտիչ Դանիէլեան Սարգսեանց	100
Մելքոն Սարգսեանց	25
Կարապետ Մարտիրոսեան Կոստենցեանց	25
Յովհաննէս Գաբրիէլեան Ուլուխանեանց	20
Ստեփաննոս Մարտիրոսեան Լիանոզեանց	15
Կարապետ Զաքարեան Գալստեանց	15
Որդիք Ամբակումայ Բուրջալեանց	15
Աբրահամ Գրիգորեան Փասօյեանց	10
Ղազարոս Դաւթեան Էզովեանց	10
Մկրտիչ Մաթէոսեան Փարրիկանթեանց	10
Գէորգ Մաթէոսեան Փարրիկանթեանց	10
Յակովբ Հայրապետեան Կրանիկշչիկեանց	10
Թովմաս Նազարբէկեանց	10
Աստուածատուր Խաչատրեան Իլեազեանց	10
Ստեփաննոս Զանումեանց	10
Գէորգ Յակովբեան Սայեադեանց	10
Յարութիւն Սարգսեան Իվանովեանց	12
Նիկողայոս Կազաչկեանց	10
Ստեփաննոս և Սիմէօն Պօպովեանք	10
Պօղոս Խաչատրեան Խաչիկեանց	5
Յարութիւն Եսայեան Դադաշեանց	3
Բարեկէր ոմն	5
Խաչատուր Թումանեանց	5

Սողոմոն Մնացականեանց	3
Գրիգոր Բէկժանեանց	3
Թէոդորոս Կարապետեան Չօրայեանց	3
Յարութիւն Ստեփաննոսեան Բաբալեանց	3
Պետրոս Յովասափեան Պօպովեանց	3
Սարգիս Ստեփաննոսեան Աւետովեանց	5
Յովհաննէս Գէորգեան Կիտայեանց	3
Յովհաննէս Յակովբեան Փռանգիւլեանց	3
Հայ-Կաթոլիկ Անդրէաս Միսայէլեան Ժալալեանց	3
Մելքոն Մարգարեան Տէր Սարգսեանց	5
Յովսէփ Գալստեան Աստուածատուրեանց	5
Աւետիս Աստուածատրեան Բախրեանց	3
Գրիգոր Դաւթեան Սօղոմոնեանց	3
Բաղդասար Գէորգեան Պօպովեանց	5
Մարգարիտ Գէորգեան Մատաթեանց	5
Ներսէս Աղաբաբայեանց	3
Միքայէլ Աստուածատրեան Պօպովեանց	5
Մկրտիչ Գաբրիէլեան Ուզլեանց	8
Աստուածատուր Գալստեան Աստուածատուրեանց	3
Սարգիս Գէորգեան Թէլէթեանց	3
Աւետիս Բաբայեանց	5
Գրիգոր Կարապետեան Պօպովեան	5
Եփրեմ Մազանդարանցեանց	10
Մինաս քահ. Մխիթարեանց	3
Սիմէօն քահ. Ղարիպջանեանց	3
Աբրահամ քահ. Պօպովեանց	3
Սարգիս քահ. Պօլաննիկեանց	1
Յակովբ քահ. Պօպովեանց	1
Օհան քահ. Խալաֆեանց	1
Յովսէփ քահ. Բէկնազարեանց	1
Սերովբէ քահ. Լազարեանց	1

Ի ՂԶԼԱՐ.

Գասպար Դաւթեան Մամաջանեանց	100
Եղբարք Իզմիրեանք	100
Տուն Համբարձումայ Փաբրիկեանց	75
Կարապետ Սերեբրակեանց	25
Առաքել Մուլթանեան	30
Խաչատուր Խուբովեանց	20
Մելքոն Սվէշնիկեանց	25
Մկրտիչ Մեհրաբեանց	20
Համբարձում Բերոյեանց	25
Գրիգոր Սերեբրակեանց	15
Զուրաբեանց	10
Մարտիրոս Թանդոյեանց	10
Յարութիւն Եաղուբեանց	10
Իսահակ Գէորգեան Եակուլեանց	10
Եսայի Միշվէլեանց	10
Յովհաննէս Պիտանեանց	25
Ղազարոս Սվէշնիկեանց	25
Յովհաննէս Պետրոսեան Գէորգեանց	10
Գրիգոր Սարգսեանց	25
Վարդան Կորանդիլեանց	15
Յակովբ Թօփչեանց	10
Ստեփաննոս Միրզեանց	10
Գրիգոր քահ. Սաֆարեանց	5
Մկրտիչ քահ. Պօպովեանց	5
Մկրտիչ քահ. Աւանեանց	3
Խաչատուր քահ. Աստուածատրեանց	3
Խորէն քահ. Լօրղանեանց	3
Աղէքսիանոս քահ. Աստուածատրեանց	3
Թովմաս քահ. Արբակեանց	1
Ստեփաննոս քահ. Փիլեանց	3
Սահակ քահ. Տ. Մելքիսեդեկեանց	2
Յովհաննէս քահ. Թավարբէկեանց	3
Գէորգ քահ. Իշխանեանց	1
Յակովբ քահ. Գրիգորեանց	1
Մկրտիչ քահ. Մկրտումեանց	1

Ի ՄՈԶԴՈԿ.

Յովհաննէս Թուշմալեանց	10
Յարութիւն Գանջումեանց	10
Պօղոս Չլթեանց	10
Յարութիւն Տ. Յովհ. Խոսրովեանց	10
Մարիամ Գալստեան Թուշմալեանց	25
Յակովբ Ղափլանեանց	5
Յովսէփ Թուշմալեանց	5
Յովհաննէս Գանջումեանց	5
Գրիգոր Լիսիցեանց	5
Յովհաննէս Եարալեանց	3
Կարապետ Բաղչիեանց	5
Յովհաննէս Կոժևնիկեանց	3
Պօղոս Պօպովեանց	1

Գ. Քալուրաշեանց	5
Առաքել Ուլուխանեանց	5
Կատարինէ Մելքոնեան Աղադուլեանց	5
Յովհաննէս Ս. քահ. Խոսրովեանց	5
Աբրահամ քահ. Բէժանեանց	3
Դաւիթ քահ. Շահինեանց	1
Գալուստ քահ. Թումանեանց	3

Ի ԳԷՈՐԳԵՒՍԿ.

Սարգիս աւագ քահ. Տ. Պօղոսեանց	5
Աստուածատուր Չերքասեանց	6
Ստեփաննոս Մուրատչեանց	5
Կարապետ Մեռժանեանց	3
Կարապետ Զօլոտարեանց	3
Աստուածատուր Խլթճեանց	2
Յովհաննէս Լօտչնիկեանց	3
Կարապետ Կապիկեանց	3
Թովմաս Չախմախեանց	3
Խաչատուր Խաչատրեանց	3
Բաղդասար Խաչատրեանց	2
Աբրահամ Աստուածատրեանց	1
Գէորգ Յարութիւնեան Դարչինեանց	1
Մարտիրոս Ռեզնիկեանց	1
Սերովբէ Աճեմեանց	3
Գրիգոր Խաչատրեանց	1
Կարապետ Արարատեանց	3
Յարութիւն Երուսաղիմսկեան	1
Խաչատուր Վարագեանց	1
Գրիգոր Ջանկուլեանց	1
Սարգիս Ցիպլեանց	2

Ի ՊԵՏԻԳՈՐՍԿ.

Յակովբ Ստեփաննոսեան Եարմաղայեանց	10
Յովհաննէս Պապասինեանց	1
Սահակ Բչախչեանց	1
Եսայի Պերպերեանց	3
Գէորգ Պօպովեանց	1
Յովհաննէս Խազիզեանց	2
Խաչատուր Թամանեանց	2
Յովհաննէս Աթամանեանց	1
Գաբրիէլ Չեռչոփեանց	1
Բաղդասար Չեռնովեանց	2
Գէորգ Բաղտանեանց	1
Յարութիւն Պօպովեանց	1
Յովհաննէս Խարաքեանց	3
Գրիգոր Աթաբէկեանց	5
Մուրացեանց	1
Քերովբէ Մնկոեանց	1
Յարութիւն Զլօտարեանց	1

Ի ՍՏԱՒՐՈՊՕԼ.

Պետրոս Աւագ քահ. Պատկանեանց	5
Բարդուղիմէոս քահ. Բէկուլեանց	3
Խաչերես Դեաչկովեանց	25
Մարգար Բարդուղիմէոսեան Պօպովեանց	50
Յովհաննէս Զուալեանց	15
Ստեփաննոս Զուալեանց	5
Գաբրիէլ Դեաչկեանց	5
Նազլու Սեվաստեանց այրի կին	3

(Ի յետոյ)

Ներքոյ նշանակեալ հաշիւը և կարգադրութիւնը հրատարակել խնդրուած է։

ՀԱՇԻՒ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՎԱՍՆ 1874 ԱՄԻ.

Խորհրդարանս Մարդասիրական Ընկերութեան ըստ սնդաւ պարտաւորութեան իւրոյ և համաձայն ԺԵ. յօդուածոյ կանոնադրութեան Ընկերութեան պատիւ ունի յանդիման կացուցանել մեծարգոյ Անդամոց ընդհ. Ժողովոյս՝ Ընկերութեանս անցեալ 1874 ամի մուտից և ելից տարեկան հաշիւը որ բացայայտ կտեսնուի ի ստորև։

Ինչպէս սորա հաշուամատենէն կերևնայ, Ընկերութիւնս 1874 թուի սկզբան ունէր դրամագլուխ նախընթաց 1873 ամէն աւելցած .		9071 69

Մուտք յընթացս 1874 ին. գոյացեալ են՝

Ի 204 բաժանորդ անդամոց տարեկան բաժանորդագինք .	1224
Ի 6 նախանձաւոր անդամոց տարեկան բաժանորդագինք . .	36

Ի Պ. Յովհաննու Պիլիկեան վասն ստանձնելոյ զկոչումն մշտնջենաւոր Անդամութեան Ընկերութեանս . .	120			
Ըստ կտակաւանդութեան հանգուցեալ Դասպարայ Մարկոսեան Փափուլեանց ընկալեալ է ի կտակակատարաց նորին միանուագ .	1000			
Թոշակք յութն թոշակաւոր աշակերտաց .	1312	50		
Ի թոշակաւոր աշակերտաց ստացեալ է վասն գրեանց . .	17	55		
Տարեկան տոկոսիք 18 պանքական և ներքին փոխառութեանց տոմսակաց . .	90			
Ի կառավարչէ վանուց սննդադրամ վասն ձրիավարժ աշակերտաց և միաբանից վանուց .	600			
Տոկոսիք առձեռն պատրաստի դրամոց Ընկերութեանս, շահեցելոց ի ձեռն գանձապահի սորին . . .	200			
Վաստակք ի վաճառմանէ չայից, ի ձեռս բերելոց Ընկերութեանս պատրաստական դրամովք . . .	643	75		
Մտից գումարն է			5243	80
Իսկ ընդամենն մտից գումարն հանդերձ անցեալ 1874 ամի սկիզբն եղած դրամագլխովն է			14315	49

Ծախք յընթացս նորին 1874 ամի են՝

Ռոճիկք ուսուցչաց	1310	89		
Վասն դասական պիտոյից . .	154	75		
Ի սնունդ աշակերտաց և միաբանից վանուց .	1150	6		
Վարձք տնտեսի, խոհարարի, լուացարարի և ծառայի . .	463			
Կառավարչին վանուց հատուցեալ է վասն ալեր ի պէտս թոշակաւոր աշակերտաց .	110	46		
Վասն հանդերձեղինաց և ազանելեաց սակս ձրիավարժ աշակերտաց	125	12		
Վասն կազմել տալոյ զգրեանս և վասն տպագրութեան հաշուատետրակաց 1873 թ. և վկայականաց աշակերտաց.	65	40		
Վասն կահուց և կարասեաց, այն է աթոռոց, երկաթեայ մահճակալաց հանդերձ վերմակօք, և զանազան պիտոյից խոհանոցի և սեղանատանն, նաև սարք ձիոց և կառաց, ևս և վասն դեղօրէից . . .	170	5		
Վասն վերանորոգութեան դպրոցին և վառարանաց նորին .	121	56		
Վասն կառավարութեան խորհրդարանին, այն է ծախք խորհրդարանի, ռոճիկ գործավարի և վարձ ծառայի .	79	30		
Ծախուց գումարն է			3750	59
Ծախուց գումարն ի բաց հանելով ի գումարէ տարեկան մտից՝ յաւելեալ է առ մին Յունվարի 1875 ամի . .	1493	21		

Բաց յայսմանէ գոյանքն

Տասն տոմսակք առաջին ներքին փոխառութեան ընդ համարով 38 սերի 16029, 16030 և 16031. համ. 39 սերի 17098, 17099, 17100 17101. 17102, 17103 և 17104 . .	1300			
Երկու տոմսակք երկրորդ ներքին փոխառութեան ընդ համարովք 22, սերի 15922 և համ. 46, սերի 12081 .	300			
Վեց պանքական տոմսակք 5% . .	595			
Պատրաստի գումար դրամոց . . .	6876	69		
			10564	90

Յաւելեալ դրամագլուխն բարդելով ծախուց

գումարին հետ՝ ընդ ամենն լինի . . . 14315 49

Ի վերջ հաշուոյս Խորհրդարանս հարկ կհամարի մէկ քանի խօսք աւել այս տեղ որպէս Ընկերութեանս, նմանապէս և Ծառանգաւորաց դպրոցի աղագաւ, որք առանձին իմն արժանի են ուշադրութեան մեծապատիւ Անդամոցդ Ժողովոյս։

Ցընթացս սոյն 1874 ամի կատարուել են յետագայ գործք։

ա. Խորհրդարանիս անդամոց մէջ եղել է փոփոխութիւն, այս ինքն Նախագահ Պարոն Յովհաննէս Սայթիքեանն զանազան քաղաքական պաշտօնատարութեանց պատճառաւ չկարողանալով Խորհրդարանիս Նախագահի պաշտօնը վարել՝ արձակեցաւ այն պաշտօնէն համաձայն իւր խնդրանաց. և պաշտօնակատար Նախագահի նշանակուեցաւ Պարոն Եպիփան Պօպոեանն, իսկ ի տեղի վերջնոյն նշանակուեցաւ պաշտօնակատար հոգաբարձուի ժառանգաւորաց դպրոցի Տէր Սարգիս Քահանայն Ոսկերչեան։

բ. Համաձայն կտակաւանդութեան հանգուցեալ Գասպարայ Փափով՝ Ընկերութիւնս ստացել է ի կտակակատարաց նորին միանուագ հազար ռուբլիս։

գ. Ցուցեալ է մի մշտնջենաւոր անդամ, որ է Պարոն Յովհաննէս Պիլիկեանն վճարելով միանուագ հարիւր քսան ռուբլիս։

դ. Պատրաստական դրամագլուխն Ընկերութեանս արդիւնաւորուել է շնորհիւ գերայարգոյ անդամոյ սորին պարոն Պօղոսի Խալթրանեան, որ այն գումարին չայ բերել էր Իրպիթ տօնավաճառէն. նոյնպէս և առձեռն գտեալ գումարը շահեցուցած է անդուլ ջանիւք և աշխատութեամբ գանձապահի սորին պարոն Խաչերեսի Ալաճալեան։

ե. Ժառանգաւոր դպրոցն ունի այժմ երեք դասարանք, առաջին, երկրորդ և երրորդ՝ ի բաքանչիւր դասարան երկամեայ ընթացիւք ուսումնառութեան. ի ներկայումս դասարանաց առաջին տարեկան ընթացքն է։ Աշակերտաց թիւը թէ ձրիավարժից, թէ թոշակաւորաց և թէ երթևեկից են ընդամենն 30 (ձրիավարժք են 12, թոշակաւորք 8, և երթևեկք 10), իսկ ուսուցիչք են չորս։

զ. Դպրոցի մատենադարանը կարգի դրուած է և հարստացած զանազան մատենիւք, որք ձեռք բերուած են թէ ընծայաբերութեամբք բարեպաշտօն անձանց և թէ աշակերտաց ներկայացուցած թատրոնէն գոյացեալ դրամովք. բոլոր մատենից թիւն են 229 հատորք, յորոց 170 հատորքն են Հայերէն տպագրեալ մատեանք, 2 հատորքն Հայերէն ձեռագիր մատեանք, իսկ 57 հատորքն Ռուսերէն տպագրեալ գրեանք։

է. Դպրոցն ունի նոյնպէս բաւականին կահ և կարասիս, որք են՝ հանդերձից դարաններ, աթոռներ, երկաթեայ մահճակալներ և այլն։

ը. Դպրոցն ունի առանձին բժիշկ Պ. Յովհաննէս Բեքբերեանն, որ յօրէ բացման դպրոցին ինքնայօժար կամօք ձրիապէս հաստուցած է իւր օժանդակութիւնը հարկը պահանջած միջոցներուն։

թ. Ցընթացս 1874 տարւոյ ժառանգաւորաց դպրոցի մէջ հինգ ձրիավարժ աշակերտք յառաջադիմութեամբ աւարտեցին զընթացս ուսմանց, յորոց երկոքինն Սամարցեան և Խանումեան զրկուեցան Վաղարշապատ Ս. Էջմիածնի նորակառոյց Ճեմարանի մէջ կատարելագործելու իւրեանց ուսումն և պատրաստելու իւրեանց անձն մանկավարժութեան պաշտօնի համար. երրորդը՝ Մխիթարեանն Ծառանգաւորաց դպրոցի մէջ վերակացութեան և մանկավարժութեան պաշտօն կկատարէ, մի և նոյն ժամանակ վանքի եկեղեցւոյ մէջ դպրութիւն անելով. չորրորդն՝ Սողախեանն նիվլիթայ գիւղը վարժապետութիւն կանէ և դպրութիւն յեկեղեցւոջ, և հինգերորդն Մարտիրոս Փոփովն գտանի ընդ խնամովք և տեսչութեամբ իւր հօրն։ Եւ սոցա մէջէն ահա երկուքն՝ Մխիթարեանն և Սողախեանն արժանացան այսօր՝ հրամանաւ Վեհափառ Հայրապետի Ազգիս՝ վերածիլ ի չորս աստիճանս դպրութեան։ Ուստի անտարակոյս պէտք է յուսալ որ՝ սոքա ուսման ճաշակը ստանալով արդէն դպրոցիս մէջ՝ այսուհետև ջանադիր կլինին եւս առաւել կատարելագործել զինքեանս գիտութեանց մէջ, որով և արժանաւոր եկեղեցականներ դառնան ի պարծանս և ի մխիթարութիւն Ընկերութեանս և Հոգևոր Իշխանութեան։

Կարճառօտութիւն ընդհանուր ժողովոյ անդամոց Մարդասիրական Ընկերութեան, որ եղև ի 11 Մայիսի 1875 ամի:

Մեք ներքոյ ստորագրեալքս՝ անդամք Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր Նախիջևանի ժողովեալ ի միասին վասն վերահասութեան արդեանց և ծախուց Ընկերութեանս վասն 1874 ամի անցելոյ գտաք, նախ՝ Խորհրդարանի Ընկերութեան մատեանները գործ դրված են ըստ կարգին։ բ. 10 տոմսակք առաջին ներքին փոխառութեան 1300 ռուբլեաց, 2 տոմսակք երկրորդ ներքին փոխառութեան 300 ռուբլեաց, 6 պանքական տոմսակք 5°/0 595 ռուբլեաց և պատրաստի ներկայ գումարն 8369 ռուբլեաց և 90 կոպէկաց գտանին ամբողջ առ գանձապահն սորին։ Ոյր վասն կարգադրեցաք՝ ա. առաջարկել անդամոց Խորհրդարանի, որ Ծառանգաւորաց դպրոցի և այլ հարկաւոր պիտոյից համար ի գործ դնեն յընթացս սոյն 1875 ամի հիմնական և պատրաստական գումարաց և բաժանորդագնաց անդամոց և կամաւոր նուիրանաց չորս մասանց երեք մասն ի վերայ հիման կանոնադրութեան Ընկերութեանս։ բ. Ի գլխոց անդամոց ընդհանուր ժողովոյս յայտնել շնորհակալութիւն մեծապատիւ պարոնայց՝ Պօղոսի Խաթրանեան, Խաչերեսի Ալաճալեան և Յովհաննու Բերբերեան, առաջնոց երկուցն՝ վասն արդիւնաւորելոյ Ընկերութեանս դրամագլուխն, իսկ վերջնոյն՝ վասն ձրիաբար կարկառելոյ զօժանդակութիւն հիւանդացեալ աշակերտաց Ծառանգաւորաց դպրոցիս· և գ. Զներկայ հաշիւն խորհրդարանի հանդերձ սոյն կարգադրութեամբ տալ տպագրել ի գիտութիւն մեբաղնեայց·

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԵՒԶԱՆԴԱՆ·

ԱՂՔԱՏԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ·

Իզմիրի Աղքատասիրաց ընկերութիւնն՝ որոյ շարունակ յառաջադիմութիւնը պատիւ կընէ իր հիմնադրաց և իր գործադիր խորհրդոյն, օր ըստ օրէ զարգանալու վերայ է, ինչպէս կը տեսնուի իր երեքտասաներորդ ամին հաշուեցուցակէն, որ կըսկսի 1874 Մայիս 1 էն մինչև ցվերջ Ապրիլի 1875։

Յիշեալ հաստատութեան նոյն տարուան ծախուց գումարն գրեթէ 21,500 ղուրուշ է, բայց եկամուտն 30,000 ղուրուշէն աւելի եղած է, ինչպէս յայտնի է իր հրատարակած մանրամասն հաշուեցուցակէն։ Այս ցուցակէն կը տեսնուի նաև թէ Աղքատասիրաց ընկերութիւնն արդէն դրամագլուխ մի ունի, որ բաղկացեալ է ի պատրաստի դրամոց և յանշարժական ստացուածոց, և որ՝ բոլորակ թուով՝ 66,000 ղուրուշի կհասնի։ Յիշեալ Մարդասիրական ընկերութեան ձեռամբ՝ յընթացս նորա երեքտասաներորդ ամին՝ խնամեալ աղքատ և տնանկ հիւանդաց թիւն 283 հոգի է· բաց յայսմանէ 603 հիւանդք ոտքի վերայ նայուած են։

Արշալոյս·

Ե·ՐԴ ՆԻՍՏ ԸՆԴՀ· ԺՈՂՈՎՈՅ ՀԱՅՈՑ ՊՕԼՍՈՅ·

Ուրբաթ օր (Յունիս 20) Ազգային Ժողով գումարեցաւ ի Ղալաթիա ընդ Նախագահութեամբ ամեն· Ս· Պատրիարք Հօր և Ատենապետութեամբ Ասլանեան Ստեփան փաշայի։

Ատեանը բացուեցաւ ժամը 7 ին ի ներկայութեան 60 ի չափ երեսփոխանաց։ Նախորդ նիստի ատենագրութիւնը վաւերացուելէ վերջը, Խառն Ժողովոյ մէկ տեղեկագիրը կարդացուեցաւ, որ Սըսոյ . . . . . խնդրոյն նկատմամբ քանի մը արդարացի դիտողութիւններ ընելէ վերջը, թէև . . . . սին հրաժարականն ընդունիլ արժան դատած, սակայն խնդիրը Ազգային Ժողովոյ վերապահեալ ըլլալով, Ժողովին տնօրինութեանը յանձնած էր։ Սոյն տեղեկագիրը իրաւասութեան և ձեռնհասութեան դիւանաց յղուեցաւ ի Նախաքննութիւն։

Յետոյ Սահմանադրութեան վերաքննութեան վիճաբանութիւնը բացուելով, ատենապետ փաշան համառօտ՝ բայց պատուական տեսութիւն մ'ըրաւ յանցելումն վերաքննութեան խնդրոյն պարագայից

վրայ և հրաւիրեց երեսփոխանները սահմանադրութեան ընդհանուր սկզբանց վրայ խօսիլ։ Ցաջորդաբար խօսք առնելով առենաբանեցին Իփէքճեան և Գօլօլեան էֆէնտիները, Տ. Մատթէոս Ծ. Վ. արդապետ Իզմիրլեան և Իւթիւճեան ու Փափազեան էֆէնտիները։

Օրն արդէն տարաժամած ըլլալով, ատեանը գոցուեցաւ 15 օրէն գումարելու որոշմամբ։

Ցոյս մեծ ունիմք՝ որ Ս. Նախագահին և Ատենապետ փաշային մասնաւոր ջանիքը վերաքննութեան հինաւուրց խնդիրն ընդփոյթ կաւարտի և ազգը իր վերաքննեալ Սահմանադրութեան շուտով տէր կըլլայ։

Հայրենիք Թ. 255, Յունիս 24.

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ.

Մուրատեան վարժարանի կտակին գործադրութեանը խնդրոյն համար, որն որ Ազգ. Ժողովոյ Դ. Նիստին մէջ Ազգ. Վարչութեան յղուած էր Կալուածոց և Դաստիարակութեան միացեալ դիւանոց տեղեկագրին վերջին եզրակացութեանն համեմատ ի գործ դնելու, Քաղ. Ժողովն ալ յատկապէս մասնաժողով մը կազմելով, անցեալ շաբթու հրաւիրիր է զայն գալ իւր պաշտօնն ստանձնել, որն որ յիշեալ վարժարանին վրայ մեր ազգին ունեցած՝ իսկ երկար ատենէ ի վեր զրկեալ իրաւունքը տեղը տանելու համար ձեռք առնուելիք հարկ և արժան տեսնուած միջոցները քննելով պիտի որոշէ և ըստ այնմ՝ գործելու պիտի սկսի։

Սոյն նորընտիր մասնաժողովոյ անդամքն են

Տիգրան	էֆ.	Եուսուֆեան
Ցարութիւն	,,	Մէրեէմլըլի
Քրիստոսատուր	,,	Ղազարոսեան
Ցովհաննէս	,,	Կիւմիւշեան
Խաչատուր	,,	Միսաքեան

Օրագիր Թ. 1578, Յուլիս 7.

ԶԷՅԹ. ՆԻՍՏ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ.

Ազգային ժողովն ուրբաթ օր (Ցուլիս 4) գումարեցաւ ի Ղալաթիա ընդ նախագահութեամբ ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Ասլանեան վսեմափայլ Ստեփան փաշայի։

Ժամը 7ին ատեան բացուելով, Նախորդ Նիստի ատենագրութիւնը և Խասգիւղի, Սամաթիոյ և Հիսարի մէջ կատարուած երեսփոխանական ընտրութիւնք, ինչպէս նաև երեք եկեղեցական երեսփոխանաց ընտրութիւնը վաւերացուեցան և Երեսփոխան հռչակուեցան.

Արժ. Պօղոս վարդպ. Խօլտամեան
,, Եղնիկ ,, Ապահունի
,, Տ. Սահակ քհնյ Միջագիւղի

Խասգիւղէն

Սարգիս էֆ. Աբրահամեան

Հիսար և Պօեաճի գիւղէն

Ցովհաննէս էֆէնտի Նուրեան

Սամաթիայէն

Ցակոբ էֆ. Ամասեան
Մինաս ,, Ճափճափեան
Ալէքսան ,, Պէշիրեան

Ցետոյ Իփէկճեան Համբարձում էֆէնտիի ընդ երկար ճամբորդութեան առթիւ երեսփոխանութենէ հրաժարիլը ծանուցուելով դիւանին կողմանէ, հրաժարականը քուէի դրուեցաւ և ընդունուեցաւ։

Ասկէ վերջը ժողովն իր օրակարգին անցնելով՝ Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն վերայ ատենաբանեցին Եուսուֆեան և Ռուսինեան էֆէնտիները, որոնցմէ վերջը ընդհանուր սկզբանց վրայ վիճաբանութիւնը գոցուելով, որոշուեցաւ Վերաքննիչ Ցանձնաժողովոյ ծրագրին վրայ յօդուած առ յօդուած վիճաբանութեան մտնել։

Ատեանը գոցուեցաւ ժամը 9 ու կէսին՝ 15 օրէն գումարելու որոշմամբ։

Հայրենիք Թ. 255, Յուլիս 8.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԲԵԹԼԷՀԷՄԻ ԱԶԳԱՅՆՈՑ ՎԵՐԱՑ.

1625 Թուին, Պարոն Տէր Գրիգոր Երուսաղէմի Հայոց Պատրիարքի օրովը, Յոյնք տիրապետութեան տենչանօք խնդիր կը յարուցանեն թէ, քանի որ Հայք Բեթլէհէմի մէջ ժողովուրդ չունին, պէտք է որ ձեռնթափ լինին Ծննդեան սուրբ Տեղիքներէն, եւ նոյն իսկ Բեթլէհէմի մեր վանուց մէջ Եկեղեցւոյ շինութեան արգելք ըլլալ կուզեն :

Իրաւ այս պարագաները կստիպեն զՊարոն Տէր Պատրիարքն, որ Երուսաղէմի սուրբ Յակոբայ վանուց քրձազգեաց միաբաններէն Մուշեղի Յակոբը ի Բեթլէհէմ տանելով կամուսնացունէ Լատին օրիորդի մի հետ, հոն նորա բնակութեան տեղի հաստատելով, անոնց ամեն պէտքերը կը հոգայ : Եւ անոնցմէ կը սերին Բեթլէհէմի Հայ ժողովուրդը, որոց թիւը այսօր 108ի կը հասնի :

Բաց ի այս ժողովուրդէն՝ 12 Հայ բնակիչ եւս ունիմք ի Բեթլէհէմ, որք ժամանակին Քէրակէն գաղթած են :

Սոյն ժողովրդեան սակաւաթիւ լինելն, որ մեծ դըժուարութիւն յարուցած էր ամուսնանալ ուղղներու մէջ տեղը, վերջին ժամանակներս հանգուցեալ Յովհաննէս Սրբազան Պատրիարքն, եթէ ոչ աշխարհի առաջին մարդոյն խապառ հետեւելու, գոնէ սակաւ ինչ մօտենալով, ճիւղահամարութիւնը հերքի իջեցոյց, որով քիչ մը դիւրութիւն եղաւ մեր սակաւաթիւ Հայ ժողովրդեան (օտար ազգաց աղջկունք իրեն հարսնութեան չառնելով) իրենց մերձականները իրեն հարսնութեան առնելով :

Թէ եւ Բեթլէհէմի մէջ անխտիր ամեն Քրիստոնեայ ազգերն իրարու հետ խնամութիւն կընեն, բայց Լատինք եւ Յոյնք միշտ կըզգուշացունեն իրենց ժողովուրդը, որ օտար ազգաց աղջիկ չիտան :

Նա եւ ըստ տեղւոյն սովորութեանց հարսնախօսութեան դրամական դաշինքը Պօլսոյ Թրադօմայի հակառակն է. փոխանակ աղջկան ծնողներէն պահանջելու, իրենք 20 ոսկիէն մինչեւ 100 ոսկի *) կը վճարեն, աղջկան մերձակայ ազգականաց ամենուն ալ ըստ արժանւոյն մէկ մէկ ընծայ կը տրուի տղայի կողմէն, եւ ասոր բուն պատճառն ալ տղայոց շատ ծնանիլն, եւ աղջկանց սակաւ լինելն է :

Բեթլէհէմի ժողովրդոց միութիւնն ազգայինէն աւելի թաղային է մինչեւ իսկ Եկեղեցական խռովութեանց մէջ, ինչպէս որ շատ անգամ պատահած է Հայոց թաղերու մէջ բնակող Յոյներն եւ Լատիններն Հայոց ժողովրդեան հետ միանալով, Յոյն եւ Լատին ժողովրդին դէմ զինած են :

Այս օրինակին կը հետեւին Բեթլէհէմի ամեն Քրիստոնեայ ազգերն :

Բեթլէհէմի Քրիստոնեայ ննջեցելոց յուղարկաւորութեան ժամանակն Եկեղեցական հանդիսի հետ կը խառնուի՝ նա եւ կանանց հանդէսն, որք ննջեցելոյն ծիրքերը եղանակաւոր բարձր ձայնով մը երգելով դագաղի ետեւէն կերթան, եւ մեռնողի շատ մերձակայ կանայք խապառ գլխիբաց կերթան :

Մեռնողի ամենասիրելի զգեստներն հետն կը թաղեն, միայն թէ Բեթլէհէմն, Երուսաղէմի սահմաններու ուրիշ քաղաքաց սովորութեան չի հետեւիր. նոր թաղուած ննջեցելոյն վրայ վրան յօրինելով՝ երեք օր կըսպասեն եւ իրենց ծանօթ ազգականք եւ բարեկամներն երեկոյ եւ առաւօտ գնալով վրանի տակը սուրճ կը խմեն : Բեթլէհէմի կանայք ութ օր շարունակ ննջեցելոյն գերեզմանի վրայ երթալով, երգեր յօրինելով ողբաձայն կերգեն, դարձեալ մերձականներն գլուխն բաց կերթան :

Այս արարողութիւնը քառասուն օրէն վերջն եւս կը կատարեն :

Նա եւ Բեթլէհէմցիները՝ ինչպէս որ Պաղեստինոյ շատ տեղերը ննջեցելոյն ամենէն ընտիրը եւ իրեն սիրելի հագուստները իրեն հետ կը թաղեն, այս առթիւ ուրիշ տեղերը վրան կը յօրինեն գերեզմանի վըրայ եւ երեք օր կը սպասեն : Նա եւ տեղւոյս ժողովուրդն ամեն երեկոյ եւ առաւօտ գերեզմաննոցը դիմելով վրանի տակը սուրճ կը խմեն : Այս սովորութիւններն առանց բացառութեան են : Որ եւ է քրիստոնեայք եւ մահմետականք անխտիր ի գործ կը դընեն :

ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Սէօ.

(*) Այս սովորութիւնը Հայաստանում շատ տեղեր կայ, եւ Պաշլըք կկոչուի, ուստի կարելի է ասել թէ, Քրտերէն աձանցուած է, վասն զի նոցա մէջ ընդհանուր սովորութիւն է:

Ծ. Խմբ. Ար.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.